

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Ծղուկ եւ Անգեղակոթ գյուղեր

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի ուղեկցությամբ օգոստոսի 29-ին այցելել է Սյունիքի մարզ: Կառավարության ղեկավարը Նախ եղել է Ծղուկ, ապա՝ Անգեղակոթ գյուղերում, ինչպես այս տարեկգրքին խոստացել էր:

Ծղուկ գյուղում վարչապետը բնակիչների հետ զրուցում լսել է նրանց խնդիրները, որոնք վերաբերում են անասնապահությանը՝ արոտավայրերին, մսի եւ կաթի մթերմանը, գյուղում նոր ման-

կապարտեզի կառուցմանը: Նիկոլ Փաշինյանը նշված հարցերի հետ կապված հանձնարարականներ է տվել նախարար Սուրեն Պապիկյանին եւ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանին՝ խնդիրների լուծման ուղղությամբ հստակ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Նշվել է, որ գյուղում մանկապարտեզ կառուցելու հետ կապված աշխատանքներ են տարվում: Մանկապարտեզի կառուցումը նախատեսվում է իրականացնել գալիք տարվա ընթացքում սուբվենցիոն ծրագրերի շրջանակում՝ կառավարություն-համայնք համագործակցությամբ:

Այնուհետեւ Նիկոլ Փաշինյանն այցելել է

Անգեղակոթ գյուղ, որտեղ կարճատեւ հանդիպման ընթացքում բնակիչները բարձրացրել են բնակավայրի գլխավոր ճանապարհի վերանորոգման հարցը: Մարզպետ Հունան Պողոսյանը զեկուցել է, որ արդեն իսկ ընթացքի մեջ են ճանապարհի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքները, որոնք իրականացվելու են կրկին սուբվենցիոն ծրագրերի շրջանակում:

Վարչապետը բնակիչներին տեղեկացրել է, որ այստեղից աշխատանքային այցով ուղևորվում է Արցախի Հանրապետություն եւ խոստացել որոշ ժամանակ անց կրկին այցելել Անգեղակոթ:

Պարետատունը հաստատեց կրթության կազմակերպման նոր կարգը. ինչ է սպասվում սեպտեմբերի 15-ից

Պարետատունը հաստատել է Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցը: Այս մասին տեղեկացնում է ԿԳՄՍ նախարարությունը:

Համաճարակային իրավիճակից ելնելով՝ ներկա փուլում ուսումնական գործընթացը հանրակրթության բոլոր մակարդակներում (տարրական, միջին եւ ավագ) մեկնարկում է 2020 թվականի սեպտեմբերի 15-ից՝ առկա ուսուցմամբ, իսկ 1-ին դասարանցիները դպրոց են հաճախում սեպտեմբերի 14-ին մեկ անձի ուղեկցությամբ: Ուսումնական տարվա առաջին կիսամյակը պարունակում է 13 շաբաթ:

Ուսումնակրթական գործընթացն իրա-

կանացվում է ուղեցույցով սահմանված կանոնների պահպանմամբ, որը պարտադիր է բոլոր հաստատությունների համար՝ անկախ իրավակազմակերպական ձեւից: Առողջ եւ անվտանգ աշխատանքային ու կրթական միջավայր ապահովելու պարտականությունն ամբողջ ծավալով կրում է հանրակրթական հաստատության տնօրենը: Պահանջների կատարումը պարտադիր է դպրոցի բոլոր աշխատակիցների, ծնողների եւ աշակերտների համար:

Դպրոցները

- ապահովվում են դիմակների, ձեռքերի մշակման մաշկային հակամեխիզների, ախտահանիչ միջոցների, անձեռոցիկների՝ առնվազն 1 շաբաթվա պահուստով,
- օրվա ընթացքում անձնակազմը եւ աշակերտներն ապահովվում են անհրաժեշտ



դիմակներով եւ ախտահանիչ նյութերով, հեռավար օգտագործման ջերմաչափով՝ առնվազն դպրոցի մուտքերի թվով, դասարանները բաժանում են առավելագույնը 20 սովորող ունեցող խմբերի: Եթե դասասենյակի մակերեսը հնարավորություն չի տալիս ապահովել սոցիալական հեռավորությունը 20 սովորողի

Աղաչում եմ ես Արեւիդ առաջ՝
Թող տառապանքի ծաղիկ չլինի,
Որովհետեւ մենք
տառապում երկար
Եվ ապրում ենք կարճ,
Որովհետեւ մենք խարտվում
ենք երկար
Եվ ապրում ենք կարճ,
Աղարտվում երկար,
Եվ ապրում ենք կարճ,
Խաղում ենք երկար,
Եվ ապրում ենք կարճ,
Ծիծաղում երկար
Եվ ապրում ենք կարճ.-
Եվ մեծ բնության
հրաշքների պես
Մեռնում ենք երկա՞ր,
Երկա՞ր ու երկա՞ր,
Այդպես ապրում ենք
հավիտենապես:

ՌԱԶՄԻԿ ԴԱԿՈՅԱՆ

Կապանում նորի՞ց ոստիկանների բուժում է. իսկ մոտ մեկ ամիս առաջ նշանակված ոստիկանապետը թախտընկեց է արվել

Ոստիկանության Կապանի բաժնում ս.թ. հուլիսի 31-ին ստեղծված ճգնաժամային իրավիճակի մասին տեղեկացրել էինք ընթերցողին:

Այն ժամանակ ոստիկանության մեր աղբյուրը տեղեկացրել էր նաեւ, թե ինչորքը հարթված է: Իսկ տեղի էր ունեցել աննախադեպ մի պոռթկում՝ բաժնի մի խումբ ոստիկաններ հայտարարություն էին արել՝ ծառայությունից հրաժարվելու եւ աշխատանքից ազատվելու մտադրության մասին:

Պարզվում է սակայն, որ ոստիկանության բաժնում հուլիս ամսին (գուցե եւ ավելի վաղ) սկիզբ առած փոթորիկը չի հանդարտվել դեռեւս:

Օրեր առաջ պաշտոնակալ է արվել մոտ մեկ ամիս առաջ բաժնի պետ նշանակված ինչ-որ Երանոսյան (հավանաբար՝ Սեւիկ անուն): Պաշտոնակալ է արվել նաեւ օպերատիվ հարցերով բաժնի պետի տեղակալ Դավիթ Սուրենյանը:

Այդ պաշտոնակալությունների պատճառների մասին պատկան մարմինները որեւէ խոսք չեն տարածել, ինչն էլ տեղիք է տվել ամենատարբեր խոսակցությունների:

Բայց, եթե ինչ-որ Երանոսյանի պաշտոնակալությունը ողջունել է բաժնի պաշտատակիցները՝ նրան համարելով պատահականություն եւ թյուրիմացություն, ապա Դավիթ Սուրենյանի պաշտոնակալությունն ավստանալով են ընդունել բաժնում եւ կատարվածը գնահատել տեղացի կադրերին ջարդելու նոր դրսեւորում:

Դժվար է ասել, թե կադրային այդ «վիրահատությունից» հետո է բաժնում լարվածության նոր փուլ բարձրացել, բայց փաստ է, որ բաժնի օպերատիվ կազմի զգալի մասը ծառայությունից կրկին հրաժարվելու մտադրություն է հայտնել մի քանի օր առաջ:

Կկարողանա՞ր բաժնի նորանշանակ պետ Չորիկ Վարդանյանը (ով «ներսից» է) իրավիճակը կարգավորել...

Անշուշտ, ժամանակը կտա այդ հարցի պատասխանը:

Մինչդեռ դա չէ հարցերի հարցը, որի պատասխանը կուզենար լսել մարզկենտրոնի հանրությունը, այլ...

Արդեն մեկ-մեկուկես ամիս է, ինչ Կապանի բաժնում խռովահույզ վիճակ է: Սակայն պատկան մարմինները հրաժարվում են վարագույրը հետ քաշել եւ հանրությանը տեղեկացնել, թե ինչ է, այնուամենայնիվ, կատարվում ոստիկանության Կապանի բաժնում:

Ի վերջո ինչպե՞ս է ստացվում, որ ինչ-որ մեկին Երեւանից բերում եւ նստեցնում են ոստիկանապետի պառոնին, բայց օրեր անց հայտարարում, թե սխալ նշանակում էր... #

Հանրակրթության բարեփոխումներ. առկա է շտապողականություն եւ ոչ համակարգված աշխատանք



ԳԱՅԱՆԵ ԱՆԱՎԵՐԴՅԱՆ
Կապանի №9 ավագ դպրոցի պատմության եւ հասարակագիտության ուսուցչուհի

Հասարակական կյանքը հակում ունի անընդհատ փոխվելու, ուսուցիչ պատահական չէ, որ ամենապահանջված բաներից մեկն աշխարհում փոփոխությունն է: Բացի տնտեսական, քաղաքական, ֆինանսական ու այլ ոլորտներից, այդ փոփոխությունների մեջ վճռական ու կարեւոր է կրթության համակարգը, դրա շարժման դինամիկան, բարեփոխումների նպատակներն ու բովանդակությունը: Այս օրերին Հայաստանի կրթական կյանքում լուրջ փոփոխություններ են ընթանում նոր չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի վերաբերյալ: Որպես ուսուցիչ, որքանով հիշում եմ, չի եղել մի ժամանակ, որ կրթությունը «հանգիստ» վիճակում լիներ: Անկախության տարիներին մի կողմ դրվեցին խորհրդային ու սկսվեցին նոր կրթակարգի որոնումները: Ասեմ, որ դեռ 1990-2000-ականների սկզբի ընդգրկվել եմ այդ գործընթացում, մասնակից եմ եղել նոր կրթակարգի մշակմանն ու քննարկումներին: Բայց ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա առկա է շտապողականություն, ոչ համակարգված ու համագործակցված աշխատանք: Դրա արդյունքում ունեցանք այն, ինչ կա եւ ունենաք այն, ինչ կունենանք 2022-2023 թթ.: Համամարդկային զարգացման տեսլականն ու զարգացումներն այն աստիճան են պարուրում մարդկությանը, որ ծիծաղելի կլինեն մնալ «մաքուր» հատկապես կրթության ոլորտում: Ասելիքս այն է, որ մենք չենք կարող խուսափել համաշխարհային գործընթացներից ու հաշվի չառնել դրանք, բայց սրա հետ ակնհայտ է՝ մենք հայ դպրոցի ու հայ երեխայի հետ գործ ունենալ: Համոզված եմ, որ ինչպես նախորդ,

այնպես էլ այս բարեփոխումների փուլում չեն ուսումնասիրվել ու բացահայտվել հայ սովորողի կարիքները, ավելին՝ չպարզեցվել է, թե որտեղ է նա գտնվում: Այնինչ՝ վերջնաորոշիչն ու բովանդակային առումով դա շատ կարեւոր է: Չափորոշային պահանջներն ընդհանրական են, երբեմն թարգմանված այլ երկրների փաստաթղթերից: Հասկանալի է, որ դրանց մեջ այն ակնկալիքներն ու ուղիներն են, որոնք պետք է ապահովեն բովանդակային ու արդյունավետ վերջնաորոշիչներ: Պետք է նշեմ, սակայն, որ դրանք ավելի շատ վերացական են ու ոչ ռեալ, հետևաբար չեն կարող ապահովել բոլոր ժամանակների բարեփոխումների ցանկալի վերջնաորոշիչը՝ որակյալ կրթությունը: Միշտ էլ յուրաքանչյուր բարեփոխում, առավել եւս՝ կրթական, անցել է կողմակիցների ու ընդդիմադիրների լուրջ բախումներով: Որպես պատմության ու հասարակագիտության քիչ թե շատ ճանապարհ անցած ուսուցիչ, կարծում եմ, որ բարեփոխումները խիստ անհրաժեշտ են: Մեր առարկաների չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը չափազանց գեղեցիկաբեռնված են՝ փաստախեղ, թվախեղ ու մեծ ծավալով: Հարկ է նշել, որ հիմնական դպրոցն ընթացքում որոշակի թեթևացում ապրեց, իսկ ավագը՝ ոչ: Որպես ուսուցիչ ասեմ, որ 2000-ականների սկզբին շատերս ոգեւորված էինք ավագ դպրոցի գաղափարով, բայց շատ շուտ էլ հիասթափվեցինք: Գրեթե ամեն ինչ նույնն էր, միայն հոսքային ուսուցում մտցվեց, մի քանի ավելի ժամ էլ վերջ: Անշուշտ, ուզում եմ հավաստիացնել, որ Հայաստանում կան մասնավոր կայացած, լավ արդյունքներ ունեցող կրթական հաստատություններ, բայց ես խոսում եմ հանրակրթության մասին, աշակերտական հսկայական անտարբեր բանակի, ավագ դպրոցի հասած ու դեռ լավ կարգալ չհմացող սովորողի մասին: Ավագ դպրոցի գաղափարը շագրենի կաշվի նման փորոցավոր ու դարձավ ամենատարածվածը: Պատահական չէ, որ նոր չափորոշիչներով հրաժարվում են հոսքային ուսուցումից, անցնում անհատականի: Քննարկումների մեջ մեծ աղմուկ է արձանագրել գրականության ծրագիրը, բայց հետ չեն մտնում նաեւ հայոց պատմության չափորոշիչներն ու ծրագիրը: Անդրադառնամ ավագ դպրոցի ծրագրին: Բովանդակային առումով այն սկսվում է Արարատյան թագավորությունից: Խիստ

անտրամաբանական մուտք, որովհետեւ չենք տեսնում մարդկության հնագույն շրջանի՝ նախնադարի վերաբերյալ, ծագումնաբանության, ինչպես նաեւ Հայկական լեռնաշխարհի հնագույն կազմավորումների, նրանց պատմության ու կարեւոր դերի մասին: Նյութեր: Իհարկե, արդարամիտ պետք է գտնվել ու ասել, որ նախորդ ծրագրերում ու դասագրքերում այդ շրջանները ներկայացված էին խրթին, ծավալուն՝ լի ավելորդ նյութերով, որոնք էլ դժվարացնում էին յուրացումն ու մտապահումը, բայց գոնե վակուում չէին առաջացնում: Ցավոք պիտի նշեմ, որ ավագ դպրոցի բոլոր դասարանների ծրագրերում պատմական ժամանակի ու տարածության անհամաձայնությունների, կտրուկաձեւության, անհարկի հետ ու առաջի պակաս չի զգացվում: Այսպես՝ Արշակունիների անկումից հետո անցում է կատարվում Բագրատունիներին, ապա՝ Կիլիկիա, որով ավարտվում է 10-րդ դասարանը: Իսկ 11-րդ դասարանը սկսվում է... «Պայթար ինքնության համար 5-6-րդ դր.» (տես՝ «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ (Նախագիծ, էջ 94): Կիլիկիայից վերադառնալով՝ անդրադառնում է կատարվում 5-6-րդ դարերի պայթարին, արաբական քաղաքակրթությանը, Բագրատունիներին, Մամիկոնյաններին (Նախագիծ, էջ 96), ապա անցում կատարում ազատագրական պայթարի գաղափարական փուլի եվրոպական ու ռուսական ուղղություններին, հայկական լուսավորականությանը եւ այսպես շարունակ: 11-րդ դասարանի վերջին թեման Արցախյան ազատամարտն է: Նույնպիսի անտրամաբանական, ժամանակագրական առումով անընդունելի է 12-րդ դասարանի ծրագիրը, որը սկսվում է «Ազգային գարթոնք» թեմայով, հետո ներկայացվում են արդյունաբերականացումը եւ կոլեկտիվացումը: Հասկանալի է, որ ամեն մի բարեփոխում նաեւ նախորդից տարբերվելու խնդիր ունի, բայց, պարունայք, պատմության շարադրման սկզբունքը ոչ ոք Մովսես Խորենացուց լավ դեռ չի տվել: «Ոչ է պատմություն առանց ժամանակագրության»: Կարելի է շատ նորարարություններ կատարել, մոդեռն եզրույթներ օգտագործել, բայց պատմության չափորոշիչն ու ծրագիրը պետք է հենված լինեն համակարգվածության, ժամանակագրության եւ պատճառահետեւանքային կապի վրա: Նույնիսկ ավագ դպրոցի լավագույն սանն ի վիճակի չի լինելու յուրացնել այն քառսն ու

վակուումը, որ կա առաջարկված նախագծում: Ասեմ ավելին, ուսուցիչների մի խումբ ան-նպատակահարմար ու անարդյունավետ համարելով այս ամենը, կհայտնվի փակուղու առաջ: Պատմության տարածության ու ժամանակի մեջ սովորողի տեղաշարժն առավելագույնը կլինի մեխանիկական: Երկրորդ կդառնա պատմական փաստերի ու թվերի սովորական կույտ: Մամուլում հետեւում եմ նախագծի հեղինակների քննարկումներին, հարցազրույցներին: Պատասխանատուներից մեկը՝ Լիլիթ Մկրտչյանն այսպիսի միտք է արտահայտում. «Տարբերությունն այն է, որ եթե նախորդ կամ գործող չափորոշիչները կառուցվում էին բովանդակության վրա, ապա այժմ դրանք կառուցվում են կոմպետենցիաների ու վերջնաորոշիչի վրա: ...Այսինքն՝ բովանդակության հետ կապված այս խոսակցությունները դուրս են թեմատիկ դաշտից, որովհետեւ մեզ համար կարեւորը վերջնաորոշիչներն են»:


Նախագծի պատասխանատուներին ուզում եմ հիշեցնել, որ չափորոշիչն ու ծրագրերը՝ մասնավոր, անհատական կամ որեւէ խմբի համար գրված, արժանախ, ժողովածու եւ նույնիսկ ձեռնարկ չեն: Դա հանրակրթության ոլորտի իրավական փաստաթուղթ է, որի վրա հենվելու է կրթության ոլորտը: Այդ փաստաթուղթը պետք է ունենա ձեւ ու բովանդակություն՝ համակարգված ու ամբողջական:

Իմ այս դիտարկումներն ամբողջական չեն, քանի մեր ձեռքի տակ չեն նաեւ դասագրքերը: Դա մի առանձին քննարկման նյութ է: Քննադատվում է նաեւ այն, որ նոր նախագծում հայրենասիրություն բառը չի գործածվում: Կարծում եմ, որ պարտադիր չէ սոսկ բառի առկայությունը, բայց առանց կամավորական շարժման կամ ինքնապաշտպանական մարտերի հայրենասիրությունն «անպաշտպան» կլինի: Շատ է օգտագործվում ինքնություն, ինքնութենական եզրույթ, որը կարելի է նաեւ փոխարինել ազատագրական պայթար, գոյապայթար կամ այլ բառերով: Անհասկանալի է նաեւ հայոց բազմադարյա մշակույթի ներկայացման կերպը:

Հաշվի առնելով բարեփոխումների կարեւորությունը՝ կոչ եմ անում մասնագետներին՝ համախմբվել, կատարել լուսավորումներ դպրոցի, հանուն ՀՀ քաղաքացու եւ նրա սպազայի: Այսպես՝ ուսուցիչը նորից մենակ կմնա անհաջող փաստաթղթերի, կրթական քաղաքականության հորձանուտներում:

Ի դեպ, ասում եմ՝ ուսուցիչների համար նախապատրաստում են «դժվար» վերապատրաստում, ինչը 30-40 հազար դրամ աշխատավարձ կալվելուց: Մի տեսակ սպառնալիքի նման է հնչում: Հետաքրքիր է, միլիոններով հավելվածք ստացողներն էլ են դժվար վերապատրաստում անցնում: //

Անսովոր սեպտեմբեր. սպասելիքներ եւ մտահոգություններ



ԽԱՀԱՏՈՒԻ ԲԱՂԱՅԱՆ
Վերին Խոտանակի միջն. դպրոցի տնօրեն

Այս փուլում է 2020-2021 ուսումնական տարին: Եվ որքան էլ հույս էինք փայփայում, որ այն կմեկնարկի առանց արտակարգ դրության, տոնական տրամադրությամբ եւ համաճարակը հարթահարած պայմաններում, ստիպված ենք խոստովանել, որ

շատերիս համար երկար սպասված սեպտեմբերը դիմավորում ենք դեռեւս առկա բազմաթիվ մարտահրավերներով ու հետագա զարգացումների հանդեպ խորն անորոշությամբ: Անշուշտ, ստեղծված իրավիճակը հետագայում կարիք կունենա համապարփակ վերլուծության: Սակայն, կարծում եմ, դա ոչ հեռու ապագայում անխուսափելիորեն սպասվող խոսակցության առանձին թեմա է, քանի որ շատ կարեւոր է վերլուծել եւ վերհանել թույլ տրված սխալները՝ ապագայում չկրկնելու նպատակով:

Նախորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մարտ ամսին, հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններն անցան ուսումնական գործընթացի հեռավար եղանակին, եւ որպես կրթական հաստատության ղեկավար՝ պետք է իմ շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեմ բոլոր ուսուցիչներին եւ կրթական գործընթացի մասնակիցներին՝ ցուցաբերած նվիրվածության եւ առկա մարտահրավերներին արագ ու համաչափ արձագանքելու

համար: Իհարկե, եղան տարատեսակ պատճառներով պայմանավորված բացթողումներ եւ թերացումներ, սակայն փաստ է, որ մեծապես մեր ուսուցչական կազմի անձնուրաց աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ իր տրամաբանական ավարտին հասցնել նախորդ ուսումնական տարին:

Եւ ուսումնական տարվա շեմին բոլորիս առջեւ ծառայան երկու կարեւոր հարց.

1. Հարունակե՞լ, արդյոք, հեռավար ուսուցումը, թե՞ վերադառնալ ուսուցման առկա եղանակին:
2. Եթե վերադառնում ենք առկա ուսուցմանը, ապա ինչպե՞ս այն կազմակերպել:

Կարծում եմ, առաջին հարցի պատասխանը շատերիս համար միանշանակ էր. վերադառնալ ուսուցման առկա եղանակին, քանզի փորձը ցույց տվեց, որ ուսուցման հեռավար եղանակը որեւէ կերպ չի կարող լիարժեք փոխարինել առկա եղանակին թե՛ մարդկային անմիջական շփման բացակայության եւ թե՛ մի շարք տեխնիկական պատճառներով: Սակայն ինչպե՞ս կազմակերպել ուսումնական գործընթացը ստեղծված եւ

դեռեւս անորոշ ժամանակով պահպանվող բարդ համաճարակային պայմաններում:

ԿԳՄՍ նախարարության կողմից բոլոր ուսումնական հաստատություններին է հասցվել համաճարակային պայմաններում կրթական գործընթացը կազմակերպելու ուղեցույց, որն, ի դեպ, մանրամասն ներկայացվեց օգոստոսի 28-ին կայացած ամենամյա խորհրդակցության ժամանակ: Մի շարք դրական նորամուծություններով հանդերձ (մասնավորապես փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության ներդրումը) այդուհանդերձ առաջարկված ուղեցույցը թե՛ ուսուցիչների թե՛ ծնողների զգալի մասի մեջ մի շարք մտահոգություններ առաջացրեց:

Անդրադառնամ դրանցից առավել քննարկվողներին:

1. Դասարանում աշակերտների քանակը չի կարող գերազանցել 20-ը: Եթե ըստ պարտեզի որոշման խնջույքների կամ սզո արարողությունների ժամանակ մասնակիցների առավելագույն թիվը 40 է, ապա առնվազն անտրամաբանական է թվում առավելագույնը 20 հոգանոց ուսումնական խմբի սահմանումը, ինչը, ի դեպ, լրացուցիչ կազմակերպչական խնդիրներ է առաջացրել դպրոցներում:
2. Պարտադիր պահանջ է ներկայացվում աշակերտների եւ ուսուցիչների կողմից ամբողջ դասապրոցեսի ընթացքում դիմակի կրումը: Նախ անհասկանալի

ԳԵՒՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ. «ԳՆՄԱՆ գործընթացը Կապանի համայնքապետարանում կազմակերպվում է օրենքի տառին համապատասխան, իսկ այդ ամենը ստվերելու որեւէ փորձ պարզունակ զազրախոսություն է»

Օգոստոսի 21-ին մայրաքաղաքային լրատվական կայքերից մեկը՝ «Յետքը», հրապարակել է հոդված «Կապանի համայնքապետը 447 մլն դրամի պայմանագիր է կնքել հորը պատկանող ընկերության հետ» վերտառությամբ, որում բարձրացված հարցերն ու կատարված դատողությունները որոշակիորեն հետաքրքրել են «Սյունյաց երկիր»։ Ուստի եւ գրույցի հրավիրեցինք Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանին՝ պարզելու մատնանշված խնդիրների իսկությունն ու արտահայտված նկատառումների հիմնավորվածությունը։



– **Պարոն Փարսյան, առաջին անգամ ենք հանդիպում Կապանի օրվան նվիրված համաքաղաքային տոնակատարությունից հետո եւ, գրույցի բուն թեմային անցնելուց առաջ, չենք կարող հազարավոր կապանցիների հավանությունը չարտահայտել այդ կապակցությամբ։ Գնումարակի թելադրած սահմանափակումներով պայմանավորված նորամտությունները, անտարակոյս, նորովի ցուցանեցին Կապանի անզուգական հմայքը, ժամանակակիցներիս հաղորդությունը քաղաքի պատմական անցյալին, հավատը՝ վաղվա օրվա ու մեր պետական ընթացքի հանդեպ։**

առանցքում, որքանով տեսնում ենք, շահերի բախման խնդիրն է արժարժվում. այսպես՝ Կապան համայնքի ղեկավարը Գեորգ Փարսյանն է, իսկ Կապանի համայնքապետարանի 2020 թ. հայտարարված գնումների մրցույթներից չորսով հաղթող է ճանաչվել Կապանի «Նորոգչին» ՍՊԸ-ն, որը պատկանում է համայնքապետի հորը։

կողմից հիմնադրված կամ ավելի քան 50 տոկոս միեւնոյն անձի (անձանց) պատկանող բաժնետնաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միեւնոյն գործընթացին...»:

– Շնորհակալ եմ։
– **Պարոն Փարսյան, հավանաբար ծանոթեք «Յետք»-ի հրապարկմանը եւ ունեք բարձրացված հարցերի պատասխանը։ Դրանց վերաբերյալ կուզենայինք լսել Ձեր պարզաբանումները, ինչի համար եւ Ձեզ գրույցի ենք հրավիրել, բայց, մինչ այդ, ցանկալի է իմանալ Ձեր ընդհանրական տպավորությունն այդ հրապարակման մասին։**
– Տպավորությունս այն է, որ ինչ-որ ուժեր կամ անձինք ցանկանում են ցեխ շարտել եւ համայնքապետի, եւ համայնքապետարանի գործունեության վրա, ստվերել համայնքում կատարվող աշխատանքները, իրականությունը ներկայացնել ծուռ հայելու մեջ եւ ստեղծել գոյություն չունեցող կոռուպցիոն սխեմաների պատրանք, ինչն անհեթեթություն է, ինչն ազնիվ չէ։
– **Վիճահարույց հրապարակման**

– Միայն առաջին հայացքից կարող է ստված սենսացիոն թվալ։ Իրականում, միջոցառում, որանում որեւէ օրինակացություն կամ արտառոցություն չկա, դրանում շահերի բախում չկա, Գայաստանի Գանրապետության գործող օրենսդրության որեւէ խախտում չկա։ Թերթեք, խնդրեմ, «Գնումների մասին» 33 օրենքը եւ կիսմովելք, որ ամեն ինչ համահունչ է օրենքի պահանջներին։

Այսինքն՝ խոսք չի կարող լինել այն մասին, որ նույն ընտանիքի անդամը՝ մեկը՝ պաշտոնյա, մյուսը՝ կապալառու կազմակերպության ղեկավար, չեն կարող մասնակցել գնման գործընթացին։

– **Միայն մի դեպքում կա արգելաբան, որը սահմանված է վերոնշյալ հոդվածի 4-րդ կետով. «Արգելվում է սույն օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց եւ (կամ) միեւնոյն անձի (անձանց)**

– **Յարապարակումն անտեղյակ ընթերցողի վրա տպավորություն է թողնում, թե Կապանում համայնքի ճանապարհների նորոգումների եւ հիմնանորոգումների հետ կապված գնումների բաց մրցույթում բացառապես հաղթող է ճանաչվել «Նորոգչին» ՍՊԸ ընկերությունը։**

Եւ, թե ինչու ռեստորաններում, առանց սոցիալական 1,5-2 մետրանոց հեռավորությունը պահպանելու խնջույքի մասնակիցները, որոնց թվում, ի դեպ, կարող են լինել նաեւ ռիսկային խմբին պատկանող բազմաթիվ անձինք, կարող են դիմակ չկրել, իսկ առավել նվազ ռիսկային խմբին պատկանող երեխաները սոցիալական անհրաժեշտ հեռավորության պայմաններում պարտավոր են առնվազն 4-5 ժամ անդադար դիմակ կրել։ Մենք այդպես էլ որեւէ լուրջ բժշկական հետազոտություն չենք անել, թե ինչ վտանգավոր հետեւանքներ կարող է ունենալ երեխայի համար դիմակի անընդհատ կրումը՝ առանց դասամիջոցների, առանց երեխայի համար կենսականորեն անհրաժեշտ ֆիզիկական ակտիվության։ Մինչդեռ՝ մի շարք մասնագետների կարծիքով՝ անընդհատ դիմակ կրելու դեպքում ներշնչվող օդի մեջ կտրուկ իջնում է թթվածնի բանակը մինչեւ 17-18 % եւ եսկանորեն աճում է սկային հիվանդությունների հնարավորությունը, ինչը չի կարող անհետեւանք լինել երեխայի առողջության համար։

– **Միայն մի դեպքում կա արգելաբան, որը սահմանված է վերոնշյալ հոդվածի 4-րդ կետով. «Արգելվում է սույն օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց եւ (կամ) միեւնոյն անձի (անձանց)**

– Իմեքից զուրկ դիտարկում է 2020 թ. բաց մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել եւ «Նորոգչին» ՍՊԸ-ն եւ Կապանի ճանապարհաշինական ընկերությունը։

3. Ըստ իս, լրջորեն չի ուսումնասիրվել մեծ բանակներով ախտահանիչ կոյուրների օգտագործման ներգործությունը մարդու օրգանիզմի վրա։ Արդյո՞ք չի ավելանում տարատեսակ պերզիկ երեւոյթների

հնարավորությունն այս դեպքում։ Դարձյալ չունենք պատասխան։

– **Կարո՞ղ եք պաշտոնապես հաստատել, որ նմանատիպ մրցույթները կազմակերպվել եւ կազմակերպվում են «Գնումների մասին» 33 օրենքին համահունչ։**

4. Դպրոցները 5-օրյա ռեժիմից անցնում են 6-օրյա ռեժիմի այն պատճառաբանությամբ, թե սրանով նվազում է երեխայի՝ դպրոցում գտնվելու ժամանակը։ Շատ կասկածելի պնդում է, բանի որ անփոփոխ է մնում ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի քանակը, սակայն դրա փոխարեն երեխան մեկ օր ավելի պետք է համապատասխան տրանսպորտային միջոցով հասնի դպրոց, ինչը, համաձայնեք, ավելացնում է վարակվելու հնարավորությունը։ Կարծում եմ, երեխայի դպրոցում գտնվելու ժամանակահատվածն ավելի տրամաբանական կլիներ կրճատել ավելի կարճ, օրինակ՝ 25-30 րոպեանոց դասաժամեր սահմանելով, ինչը, ի դեպ, նախատեսվում է բազմափուլ ուսուցում իրականացնող կրթական հաստատություններում։

– **Ներքող եղեք, բայց ավելորդ է նույնիսկ ման հարցի առաջադրումը։ Գնման գործընթացը Կապանի համայնքապետարանում կազմակերպվում է օրենքի տառին համապատասխան, իսկ այդ ամենը ստվերելու որեւէ փորձ պարզունակ զազրախոսություն է։ Ուրիշ կերպ լինել չի կարող։**

Սրանք շատերիս անհանգստացնող հարցերի ընդամենը մի փոքր մասն են, որոնց մասին բարձրաձայնում եմ։
Գնումված եմ, ապագայում շտկումներն անխուսափելի են լինելու։ Կարեւորը, ինչպես ժողովուրդն է ասում, ունեք շինելու փոխարեն աչքը չվնասեք։
Լինենք ողջախոս, Աստված պահապան բոլորիս։

– **Այսպիսի արձանագրում է կատարվում հողանկարում. «Յատկանշական է, որ համայնքի ղեկավարի հոր ընկերությունը նշված մրցույթների միակ մասնակիցն է եղել...», արդյո՞ք այդպես է։**

հայտարարել ենք հինգ անգամ՝ մասնակից չլինելու պատճառով։

– **Կապանի «Նորոգչին» տարածաշրջանի համբավվոր շինարարական կազմակերպություններից է։ Վերջին տասը տարում տարածաշրջանի շինարարական կյանքը, խոստովանենք, հնարավոր չէ պատկերացնել առանց այդ ընկերության։ Ասել է թե՛ «Նորոգչինը» համբավ է ունեցել եւ պահանջված է եղել դեռեւս Ձեր՝ համայնքապետ դառնալուց շատ տարիներ առաջ։ Եվ հիմա, հանկարծ, փորձ է արվում ստվերել նրա բարի համբավը. դա ոչ միայն մեր կարծիքն է, դա բազմաթիվ կապանցիների ու ուրտի մասնագետների կարծիքն է։**

– Գիտե՞ք, ամենամեծ թեթեւ այն է, որ «Նորոգչինի» ներկայիս գործունեությունը փորձում են դիտարկել հայր եւ որդի հարաբերությունների՝ այս դեպքում արհեստական, շինծու պրիզմայով, որը իրականության հետ կապ չունի։

Շատ կուզենայի, որ «Նորոգչին» պես մի քանի շինկազմակերպություն ունենայինք Կապանում։

«Նորոգչինի» նախորդ տարիների գործունեությունը միայն ու միայն որակի, պատասխանատվության, սրտացավության օրինակ է։

Մի ուրիշ ճշմարտություն էլ կա՝ եթե «Նորոգչինը» շահել է որեւէ մրցույթ, ապա ոչ միայն որակով ու ժամկետին են կատարվելու աշխատանքները, այլ շահույթի հաշվին լրացուցիչ աշխատանքներ են կատարվելու, որ նախատեսված չեն նախագծանախաշվային փաստաթղթերով, բայց անհրաժեշտ են եղել։ Օրինակ, Կավարտ տանող ճանապարհը, որի համար 10 մլն դրամ էր նախատեսված, բայց կրկնակի չափով գումար ծախսվեց։

– **Յողվածագիրը հարցնում է՝ եթե «Նորոգչին» ՍՊԸ-ն ոչ նպատակային օգտագործի իրեն հատկացված գումարները, ի՞նչ է պատրաստվում անել Գեորգ Փարսյանը, ով 2019 թ. ապրիլի 10-ին ստեղծված այն հանձնաժողովի ղեկավարն է, որի նպատակն է շինարարական եւ վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքի վերահսկումը։**

– Նախ՝ անգամ տեսակետներն նման իրավիճակ չեն պատկերացնում «Նորոգչինի» առումով։

Այնուհետեւ՝ նման խնդիր առաջանալու դեպքում, եթե իսկապես մտահոգում է լրատվամիջոցին, առաջնորդվելու ենք բացառապես օրենքի կարգավորումներով։

Եվ ամենակարեւորը՝ թող որեւէ մեկը հեռվից՝ տաք անկյուններից, չփորձի իր արշինով չափել Կապանի համայնքապետի եւ համայնքապետարանի գործունեությունը։

– **Յողվածագիրը նշում է՝ չենք կարող ասել, թե անցյալ տարի համայնքապետ որդին մրցույթներից բանիսն է շնորհել հորը, բանի որ Կապանի համայնքապետարանը պայմանագիրը չի հրապարակում armpes.am կայքում։**

– Մեկ անգամ եւս հայտարարեմ, որ «Նորոգչինի» միջոցներն են շնորհվում համայնքին եւ ոչ թե մրցույթներն են շնորհվում այդ ընկերությանը։

Իսկ պայմանագրերին կարելի է ծանոթանալ նշված կայքում։

Ինչ վերաբերում է այն պնդումին, թե իբր «Նորոգչինը» շահերի բախման բացակայության մասին հայտարարություն պիտի ներկայացնել ֆինանսների նախարարության procurement.am կայքում ու չի ներկայացրել, ապա վստահաբար ասում եմ՝ 33 ֆինանսների նախարարության գնումների համակարգի կայքում ներկայացված է հայտարարություն, եւ այդ կայքը հասանելի է բոլորին։

ՀԱՐՑԱԾՈՐՈՒՅՑԸ՝ ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

»

Սեւրի հաշտության պայմանագրի 100-ամյակը. «Սյունյաց երկիրը» հեռավար հարցազրույց է վարել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի հետ

Օգոստոսի 31-ին Սամվել Ալեքսանյանն ու Վահրամ Օրբեյանը հեռավար հարցազրույց են ունեցել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի հետ: Չրույցի թեման Սեւրի հաշտության պայմանագիրն էր, որը ստորագրվել է 1920 թ. օգոստոսի 10-ին:



Արոն Մելքոնյան, շնորհակալություն, որ համաձայնվել էք հերթական անգամ հարցազրույց տալ «Սյունյաց երկիր»:

Ձեր դիրքորոշումը միշտ էլ հետաքրքիր է եղել մեր լսարանին:

Դա է պատճառը, որ ուզում եմք Ձեր օգնությամբ հայացք ձգել հայ ժողովրդի պատմության կարեւոր էջերից մեկին՝ Սեւրի հաշտության պայմանագրին:

Նախ՝ միջազգային իրավիճակը, որի պայմաններում ստորագրվեց Սեւրի հաշտության պայմանագիրը եւ, իհարկե, ի՞նչ խնդիրներ պիտի լուծեր պայմանագիրը:

– 1918 թ. աշնանն առաջին աշխարհամարտը մոտենում էր ավարտին, եւ պատերազմող կողմերից Անտանտի երկրները հաղթանակ էին տոնում, ու նոյեմբերի 11-ին կնքվեց Գերմանիայի հետ Կոմպիենի հայտնի հաշտությունը, որով գերմանական բոլոր ճանաչեց իր պարտությունը: Եվ հետպատերազմյան սահմանների խնդիրը քննարկելու համար անհրաժեշտ էր քառյակ դաշինքի երկրների հետ առանձին-առանձին կնքել պայմանագրեր, որոնցով պետք է արձանագրվեին հետպատերազմյան սահմանները: Դրանց մեջ՝ գերմանական խմբավորման երկրներից վերջինը Թուրքիան էր, որի հետ Անտանտի երկրները որոշեցին կնքել պայմանագիրը:

Այսինքն՝ այդ ողջ գործընթացը սկսվել է 1918 թվականի վերջից: 1919 թվականի սկզբին, երբ սկսեց գործել Փարիզի վեհաժողովը, որա շրջանակում վերջին Անտանտի երկրները պայմանագիր կնքեցին Թուրքիայի հետ: Եվ, բնականաբար, Հայաստանի Հանրապետությունը, որ արդեն պատմական իրողություն էր 1918թ. մայիսի վերջից, պատերազմի ժամանակ ահռելի կորուստներ էր կրել, ու, բնականաբար, այդ կորուստները գերմանա-թուրքական ռազմական բյուրի մեղքով էին հիմնականում իրականացվել, եւ Հայաստանն արդեն որպես պետություն իրավունք ուներ օգտվելու հաղթանակի պտուղներից: Ուստի եւ 1918թ. վերջին պաշտոնական պատվիրակություն կազմվեց Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, որը մեկնեց Փարիզ: Միաժամանակ Փարիզում 1912թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ 5-րդի տված լիազորություններով գործում էր ազգային պատվիրակությունը՝ եգիպտոսի մեծահարուստ Պողոս Նուբարի գլխավորությամբ, որոնք 1919 թ. փետրվարի կեսին բանակցելով՝ մեկ միասնական ծրագրով հանդես եկան այդ վեհաժողովում: Իմաստն այն էր, որ Արեւմտյան Հայաստանի նահանգների զգալի մասը՝ ելքով դեպի Սեւրի ծով եւ Կիլիկիայի չորս գավառներ, պիտի անցնեին, վերջնական սահմանները զօնուց հետո, նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը:

– Սեւրի հաշտության պայմանագիրը, որքանով տեղյակ եմք, մաքուր էջի վրա չգրվեց կամ դատարկ տեղում

չձևվեց: Իրավական ի՞նչ հիմքեր կային բանակցությունների պահին:

– Այո, խոսքը Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի մասին է, որ ձեւավորվեց պատերազմի ավարտից հետո, բայց արդեն պատերազմի ընթացքում 1916 թվականին, Անգլիայի եւ Ֆրանսիայի երկու դիվանագետ՝ Սայքսը եւ Պիկոն կնքել էին Սայքս-Պիկոյի հայտնի համաձայնագիրը, որով պատերազմի ավարտից հետո Թուրքիան որպես կայսրություն դադարելու էր գոյություն ունենալուց, եւ նրա տարածքները պիտի անցնեին Անգլիային, Ֆրանսիային:

Հետագայում նրանց միացավ Ռուսաստանը, հետո նաեւ՝ Իտալիան: Սակայն քանի որ Ռուսաստանը 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դուրս եկավ Անտանտի կազմից, բնականաբար, պատերազմի պտուղներից օգտվելուց զրկվեց, ու Սայքս-Պիկոյի համաձայնագրի իրավական հիմքով առաջնորդվեցին Անտանտի երկրները՝ Թուրքիայի տարածքը բաժանելու հարցում, եւ, բնականաբար, կայսրության արեւելյան նահանգները՝ Արեւմտյան Հայաստանի տարածքի մեծագույն մասը նախատեսվեց բաժին հանել Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Անտանտի երկրների հաշտակից երկիր՝ 1920 թվականի հունվարից պաշտոնապես ճանաչված:

– Ստացվում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներն ամփոփվեցին առանց Ռուսաստանի: Այդպե՞ս է:

– Այո, որովհետեւ Ռուսաստանը դուրս էր եկել պատերազմից, սեպարատ հաշտություն էր կնքել Բրեստ-Լիտովսկում գերմանական բոլորի երկրների հետ, եւ, բնականաբար, Լենինի կառավարությունը չէր կամենում, բոլշևիկների պատկերացմամբ, կողոպտչական սահմաններ ապահովել իրենց համար՝ ենթադրելով, որ ավելի նախընտրելի է նոր համակարգը, այսինքն՝ բոլշևիկները՝ սոցիալիստական համակարգը, քան թե տարածքների խնդիրը, քանի որ, բոլշևիկների կարծիքով, համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն է լինելու, եւ սահմանները ժամանակավոր են, ուստի դրանք պիտի վերանայվեն:

– Հատերին թվում է, թե Սեւրի պայմանագիրը բացառապես Հայաստանին առնչվող է, ուստի եւ կուզենայինք մի փոքր բացել հաշտության պայմանագրի բովանդակությունը եւ կառուցվածքը:

– Դա ահռելի մեծ փաստաթուղթ էր՝ բաղկացած վեց հատվածից, 300 ընդհանուր խոշոր հոդվածից, որոնցից միայն 6-րդ հատվածի 88-ից 93 հոդվածներն էին վերաբերում Հայաստանին: Այսինքն՝ նախկին Օսմանյան կայսրության հետ սահմանների բոլոր խնդիրները՝ կապված գաղթականության տեղափոխման, գույքի հատուցման, թուրքական իշխանությունների հետպատերազմյան պարտավորությունների եւ, ընդհանրապես, ամեն ինչին վերաբերող, եւ Հայաստանին էին առնչվում, եւ Եգեյան

Մտկվայի պայմանագիրը մեր թիկունքում գործաբե էր հակահայկական բնույթի՝ սուր սլաքով ուղղված էր հայ ժողովրդի շահերի դեմ, որի հետեւանքով Հայաստանը կորցրեց նույնիսկ Արեւելյան Հայաստանի տարածքները՝ Կարսի մարզը եւ Սուրմալուի գավառը՝ Արարատ լեռնազապաթով ու Արարատյան դաշտի Արաքսի աջակողմյան հատվածով, որ երբեւէ չէր եղել Թուրքիայի տարածքում...

ծովի կղզիներին, եւ Բոսֆոր-Ղարդանեյի նեղուցների խնդիրն, եւ արաբական ամբողջ աշխարհին, ապագա Լիբանանին, Պաղեստինին, Իրաքին, դրանց մանդատների խնդիրներին: Ամբողջ Օսմանյան կայսրության տարածքին վերաբերող կարեւորագույն իրավական միջազգային փաստաթուղթ էր, որի մի կտորը, բնականաբար, վերաբերում էր Հայաստանին: Բացի 88-93-րդ հոդվածներից, կային առանձին հոդվածներ՝ մեկ տասնյակի չափ, որոնք այսպես թե այնպես առնչվում էին Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերին:

– Պարոն Մելքոնյան, կարո՞ղ եմք արձանագրել, որ Հայաստանի պատվիրակությունը վերջնական փաստաթղթում ստացավ այն, ինչն ակնկալում էր տվյալ պահին, թե՞...

– Իհարկե, մենք ազգային ավելի մեծ ակնկալիքներ ունեինք, որովհետեւ, օրինակ, Պողոս Նուբարի պատվիրակությունը պնդում էր, թե ծովից ծով Հայաստանի գաղափարը պիտի կայանք կոչել, Կասպից եւ Սեւրի ծովերից մինչեւ Միջերկրական ծով պիտի սահմաններ ունենանք: Այդ նպատակով էլ մեր կողմի պաշտոնական փաստաթղթում, որ փետրվարի վերջին ներկայացվեց Անտանտի երկրների ղեկավարներին, իր մեջ, բացի Արեւմտահայաստանի նահանգներից, ներառում էր Կիլիկիայի չորս գավառների խնդիրը: Բայց արդեն 1920 թվականի ապրիլ ամսին, երբ Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի ձեւավորման շրջանի մեջ հերթական մի կոնֆերանսը եղավ իտալական Սան Ռեմո քաղաքում, այնտեղ վեց տերությունների ղեկավարները եկան ընդհանուր հայտարարի, որ հայկական հարցի լուծումը պետք է իրականացնել Հայաստանի երկու հատվածի միավորման տարբերակով, այսինքն՝ գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության մոտ 70 հազար քառակուսի կիլոմետր տարածքին պետք է ավելանա եւս 90 հազար քառակուսի կիլոմետր՝ Տրապիզոնի, Երզրումի, Բիթլիսի եւ Վանի վիլայեթների հիմնական տարածքներով եւ, բնականաբար, Տրապիզոն

նավահանգստով՝ ելքով դեպի Սեւրի ծով: Ինչպես ժամանակին ասում էր Անգլիայի վարչապետ Լյորդ Ջորջը, այն պետք էր Հայաստանին որպես թոքեր՝ շնչելու համար, այլապես Հայաստանը տարածաշրջանում չի կարող հուսալի հենարան լինել իրենց համար, որպես դաշնակից երկիր, եթե չունենար ելք դեպի Սեւրի ծով: Ընդ որում՝ հոդվածներից մեկը նախատեսում էր, որ Հայաստանի Հանրապետությունը դեպի Սեւրի ծով ելք ունենալուց գատ՝ Բոսֆոր-Ղարդանեյով դեպի Միջերկրական ծով ազատորեն դուրս գալու իրավունք ունենար: Սա առանձին հոդված էր եւ շատ կարեւոր:

– Ի՞նչ ասել է մանդատային տարածք կամ մանդատային կառավարում:

– Հարցը շատ կարեւոր է, որովհետեւ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր տնտեսական, ռազմական, սոցիալական ծանրագույն պայմաններում, մինչեւ 300 հազար գաղթականներով լցված, աղքատություն, սով, հատկապես 1918-ի վերջին եւ 1919-ի սկզբին սոսկալի սով էր Հայաստանում եւ համաճարակներ, որոնք ուղղակի հնձում էին բնակչությանը, ու այդ պայմաններում Հայաստանի Հանրապետությունը նախատեսված սահմաններով հզոր պետություն դառնալու համար չունեին ներքին ռեսուրսներ, նրան պետք էր արտաքին օգնություն, եւ այդ իմաստով ծնվեց մանդատի գաղափարը: Ու դա՝ ոչ միայն Հայաստանի համար: Թող չստեղծվի այդպիսի թյուր կարծիք: Մանդատի խնդիր կար ամբողջ Մերձավոր Արեւելքի համար, Փոքր Ասիայի համար, ապագա ձեւավորվելիք պետությունների համար, ասենք՝ Սիրիայի, Պաղեստինի, Իրաքի համար մանդատի հարց կար, որ մեծ պետություններից մեկը պիտի ստանձներ՝ մինչեւ այդ երկիրը լիարժեքորեն ոտքի կկանգնեց, հետո այդ մանդատն իր ուժը կկորցնեց: Քանի որ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնն առանձնակի հետաքրքրություն ուներ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ եւ առաջինների թվում էր, որ 1920 թ.

Լ ապրիլի 24-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը եւ Արմեն Գարոն (Գարեգին Բաստրմաջյան) դարձավ Հայաստանի Հանրապետության առաջին դեսպանը Միացյալ Նահանգներում, ուստի որոշվեց այդ մանդատի խնդիրը թողնել Միացյալ Նահանգների վրա: Եվ դրա համար ԱՄՆ նախագահը 1919 թ. հատուկ պատվիրակություն ուղարկեց արեւելք՝ գեներալ Տեյմս Հարթորդի գլխավորությամբ: Նա եկավ, ուսումնասիրեց Հայաստանը, բայց, ցավոք, հանգեց մի եզրակացության, որ աղբատ, ավերակված, զրկված ու զարկված Հայաստանի մանդատը վերցնելը ենթադրում է կյոթական մեծ միջոցների ներդրում, այդ թվում՝ նաեւ ռազմական: Նրա հաշվարկներով 59 հազարանոց ամերիկյան մի ռազմական ներկայություն (կորպուս) էր անհրաժեշտ այդ ծրագիրը կյանքի կոչելու համար, եւ հետաքրքիր եզրակացության հանգեց՝ 27 կետից բաղկացած, որի համաձայն՝ 14 կետով Հայաստանի մանդատը վերցնելն Ամերիկայի համար ձեռնտու էր, 13 կետով՝ ձեռնտու չէր: Այսինքն՝ այնպիսի եզրակացության հանգեց, որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, ըստ երեսույթին, մար գոհ այդ պատվիրակությունից, որ մանդատը վերցնելը ճիշտ է, բայց 13 կետ բացասական բնութագրումով սենատորներին հասկացրեց, որ ծանր բեռ է Հայաստանին իրենց համար, եւ արդյունքում 1920թ. հունիսի 1-ին, սենատը քննարկեց այս խնդիրը ու 52 կողմ, 23 դեմ ձայնով մերժեց Հայաստանի մանդատն ընդունելը:

– **Կարելի՞ է ասել, որ այդ եզրակացության եւ սենատի քննարկման պատճառով Արեւմտյան Հայաստանն անկախություն չստացավ՝ ի տարբերություն մանդատային մյուս տարածքների, որոնք, ի վերջո, ստացան իրենց պետականությունն ու անկախությունը:**

– Իհարկե, պատճառներից մեկը դա կարելի է համարել, բայց գլխավոր պատճառը քեմալաթուրքիկյան մերձեցումն էր. 1920թ. ապրիլ ամսից բոլշևիկյան Ռուսաստանը եւ քեմալական Թուրքիան, երկուսն էլ որպես ապստամբական ռեժիմներ, որպես միջազգայնորեն ճանաչված իրավական կողմեր, մերձեցան միմյանց, 1920 թ. օգոստոսի 24-ին կնքեցին գաղտնի համաձայնագրի նախնական տարբերակը, որի սուր սլաքն ուղղված էր Հայաստանի դեմ, իսկ 1920 թ. սեպտեմբերի 1-ից 7-ը Բաքվում տեղի ունեցած Արեւելքի մուսուլման ժողովուրդների համագումարում որոշվեց Հայաստանը խորհրդայնացնել քեմալական Թուրքիայի գործերով, այսինքն՝ եկան ընդհանուր հայտարարության, որ թուրքական գործը մտնելու է Հայաստան՝ այն խորհրդայնացնելու, եւ որոշակի սահմաններով Հայաստանը պիտի բաժանվի Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ, ինչը, ցավոք, տեղի ունեցավ 1920 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում, երբ Հայաստանը կորցրեց իր անկախությունը:

– **Պարոն Մելքոնյան, ամեն մի պայմանագիր, առավել եւս նման մաշտաբի, ունենում է կատարման, իրականացման երաշխիքներ, գործիքներ: Կարելի՞ է ենթադրել, որ Սեւրի հաշտության պայմանագիրը զուրկ էր կյանքի կոչվելու նման երաշխիքներից, մեխանիզմներից, այլապես...**

– Տեսեք՝ ինչն է խնդիրը. Անտանտի երկրները, հատկապես Անգլիան- Ֆրանսիան հասան իրենց գլխավոր նպատակին՝ Եվրոպայում Նոր ստատուս-բոնո ստեղծեցին, որ իրենց համար նպատակաւոր էր եւ լիովին բավարարում էր իրենց շահերը: Արդեն 1920 թ. այդ պատերազմից հոգնած Անտանտի երկրներն այլեւ չկամեցան, ըստ էության, լրջորեն թիկունք կանգնել Հունաստանին եւ Հայաստանին, որոնք պատերազմ էին մղում քեմալական շարժման դեմ: Օրինակ, հույներին սկզբնական շրջանում շատ օգնեցին հատկապես անգլիացիները, հատկապես Չերչիլը: Հունական բանակը, թվում է թե, ինչպիսիք լուծել է նաեւ Փոքր Ասիայում, սակայն Սաբարիայի ճակատամարտում բոլշևիկ ռուսների աջակցությամբ՝ ֆինանսական եւ ռազմական մեծ դեր խաղացին, որ Սաբարիայի ճակատամարտում թուրքերը հույների նկատմամբ հաղթանակ տանեն, որից հետո Թուրքիայի ճակատը փաստորեն մի կողմից բացվեց, երկկողմանի պատերազմը դադարեց Թուրքիայի համար, որն այդ պատերազմում կարողացավ հաջողություն

արձանագրել ու փաստորեն ի չիք դարձնել Սեւրի պայմանագրի գործադրումը:

– **Դիվանագիտական առումով, միջազգային իրավական առումով կարելի՞ է ասել՝ Թուրքիայի կողմից ձեռնարկված արշավն ընդդեմ Սեւրի, վերջնական իր ամրագրումը ստացավ Լոզանի կոնֆերանսով եւ պայմանագրով:**

– Կա այդպիսի տեսակետ, որ Լոզանը թաղեց Սեւրի պայմանագիրը: Սակայն մեր վերջին ուսումնասիրությունները, մասնավորապես, Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի հայտնի ցեղասպանության պատմության բաժնի վարիչ Արմեն Մարոքյանը լրջագույն աշխատություններ է գրել, որտեղ ապացուցում է, թե ամենեւին էլ այդպես չէ՝ Նախ այն իմաստով, որ մինչեւ հիմա դաշնագրի 89-րդ հոդվածը, որի համաձայն իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանի, իրականացնելու է ԱՄՆ նախագահի Վուդրո Վիլսոնը, որը վավերացման կարիք բնավ չունեւ, այսինքն՝ այն իրավարար վճիռ էր: Այն օրը, երբ որ իրավարար վճիռը ներկայացվել է Միացյալ Նահանգների նախագահի կողմից, այդ օրվանից Թուրքիան պարտավորվել է այն ճանաչել ու անմիջապես գործադրել, ինչը Միացյալ Նահանգների նախագահն արեց 1920 թ. նոյեմբերի 22-ին: Իրավական առումով այդ փաստաթուղթն ուժի մեջ մնաց առ այսօր: Այն վավերացման կարիք չունի եւ չի կարելի շփոթել Սեւրի հաշտության պայմանագրի հետ:

– **Տասնամյակների խորքերից վերադառնալով մեր օրեր. միջազգային իրավունքի տեսակետից ի՞նչ կարգավիճակ ունի Սեւրի հաշտության պայմանագիրն այսօր:**

– Նախ՝ Սեւրի հաշտության պայմանագրի

Միշտ ասել եմ եւ նորից կրկնեմ՝ այդ իրավարար վճիռն ուժով այսօր էլ միջազգային իրավունքի տեսանկյունից հայ-թուրքական սահման հանդիսանում է ոչ թե Ախուրյան-Արաբսը, որ պարտադրվեց Խորհրդային Հայաստանին՝ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով, այլ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով նախատեսված սահմանը՝ Տրապիզոն, Երզրում, Բիթլիս եւ Վան վիլայեթների հիմնական տարածքներով:

հոդվածների մի զգալի մասն արդեն կյանքի է կոչվել. խոսքը վերաբերում է արաբական երկրների ինքնավարությունների եւ պետական կազմավորումների ստեղծմանը՝ Լիբանան, Պաղեստին, Իրաք, Սիրիա: Այս ամբողջը Սեւրի պայմանագրով էր նախատեսված: Սրանցից միայն կյանքի չկոչվեցին Հայկական հարցի եւ բողոքական ինքնավարության խնդիրը, որ պիտի կյանքի կոչվեր Հայաստանի Հանրապետությունից հարավ՝ Մոկաց լեռնաշղթայից հարավ՝ Յուսիսային Իրաքում: Այնպես որ՝ այդ տեսանկյունից Սեւրի դաշնագիրը հիմնականում կյանքի կոչվել է, բայց իրավարար վճիռը շարունակում է մնալ ուժի մեջ, որովհետեւ դա վավերացման կարիք չունեւ, եւ ոչ մի երկիր առ այսօր պաշտոնապես չի հայտարարել, թե ինքը իրաժարվել է Սեւրի դաշնագրից կամ նրա կարեւորագույն հոդվածներից մեկից՝ 89-րդ հոդվածից, որ նախատեսում է Միացյալ Նահանգների նախագահի Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ:

Միշտ ասել եմ եւ նորից կրկնեմ՝ այդ իրավարար վճիռն ուժով այսօր էլ միջազգային իրավունքի տեսանկյունից հայ-թուրքական սահման հանդիսանում է ոչ թե Ախուրյան-Արաբսը, որ պարտադրվեց Խորհրդային Հայաստանին Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով, այլ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով նախատեսված սահմանը՝ Տրապիզոն, Երզրում, Բիթլիս եւ Վան վիլայեթների հիմնական տարածքներով: Պատահական չէ, որ անհրաժեշտության դեպքում Արեւմուտքի երկրներն այդ իրավարար վճիռը կիջեցնեն Թուրքիային՝ նրա վրա դիվանագիտական, ռազմական, տնտեսական ազդեցություն տարածելու նպատակով:

– **Հայաստանի 1-ին, 2-րդ, 3-րդ հանրապետությունները երբեւէ վերաբերմունք հայտնել են Սեւրի պայմանագրի հանդեպ:**

Գոնե հիմա կարո՞ղ ենք ասել, թե ինչ դիրքորոշում ունի ՀՀ-ն այդ շատ կարեւոր

փաստաթղթի հանդեպ:

– Ասեմ, որ, իհարկե, խորհրդային տարիներին ոչինչ չէր խոսվում այդ մասին, որովհետեւ Ռուսաստանն այդ պայմանագրի ստորագրմանը չէր մասնակցել, եւ Մոսկվայի, այդպես ասած, ճնշման տակ հայկական կողմը երբեք չէր կարող խոսք ասել, իսկ հիմա արդեն, բնականաբար, երբ փոխվեց վիճակը, հետխորհրդային տարիներին այդ խնդրի առնչությամբ Ռոբերտ Բոչարյանը պատասխանեց լրագրողներից մեկի հարցին, բայց հստակ պատասխան չհնչեցրեց: Մերժ Սարգսյանն Ամերիկայի Միացյալ Նահանգներ այցի ժամանակ ծաղիկներ դրեց Վուդրո Վիլսոնի գերեզմանին, որը եւս վերաբերմունքի մի նշան էր: Եվ վերջապես, երբ օրերս մենք Գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպեցինք շատ ծանրակշիռ մի գիտաժողով, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հատուկ ուղերձով հանդես եկավ, որով կարեւորեց այդ փաստաթղթի պատմաիրավական նշանակությունը: Այսինքն՝ սա արդեն պաշտոնական վերաբերմունք էր, որ նաեւ արտահայտվեց հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի ուղերձում, սակայն անմիջապես հակադարձվեց թուրքական կողմից: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կողմից շատ կոշտ հայտարարություն եղավ այդ կապակցությամբ, բայց, բարեբախտաբար, հայկական կողմը բարձրության վրա գտնվեց ու կարեւորեց այդ փաստաթղթի պատմաիրավական նշանակությունը, ինչը պատմաբաններին համար նոր փուլ է բացում այդ փաստաթղթի ուսումնասիրության եւ մեր ազգային իդեալների կյանքի կոչման հեռանկարի տեսանկյունից:

– **Այս համատեքստում մի հարց,**

այնուամենայնիվ, պարզաբանման կարիք ունի, մի կողմից Սեւրի հաշտության պայմանագիր, Լոզան եւ այլն: Մյուս կողմից՝ ունենալ Մոսկվայի հայտնի պայմանագիրը եւ Կարսի պայմանագիրը: Ներկայացրեք, խնդրեմ, դրանց հարաբերակցությունը. ի՞նչ հասկացություններ են առկա այդ պայմանագրերի միջեւ:

– Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը Սեւրի հակառակ պատկերն էին, որովհետեւ Մոսկվայի պայմանագրի տևորինոզը Հայաստանը չէր, մասնակցող չէր. Խորհրդային Հայաստանի մասին է խոսքը:

Ալեքսանդր Բենեդադյանին, ով ներկայացնում էր հայկական պատվիրակությունը, թույլ չտրվեց Մոսկվայում մասնակցել բանակցություններին եւ պայմանագրի կնքմանը, ու անօրինական պայմանագիրը կնքվեց երկու ապստամբական ռեժիմների՝ քեմալական Թուրքիայի եւ բոլշևիկյան Ռուսաստանի միջեւ: Այսինքն՝ երկու երկիր միմյանց միջեւ բաժանեցին մի երրորդ երկիր: Խոսքը վերաբերում է Հայաստանին:

Եւ այդ պայմանագրի 15-րդ կետով Թուրքիան պարտադրում էր Խորհրդային Ռուսաստանին, որ վերջինս պարտավորություն ստանձնի՝ պայմանագիրը նույնությամբ ստորագրել տալ Անդրկովկասյան երեք հանրապետություններին:

Արդե՞քանը կստորագրեր, ինչպիսիք չէր, նրա շահերն արդեն արտահայտված էին Մոսկվայի պայմանագրի 3-րդ եւ 15-րդ կետով: Թուրքիան փաստորեն պարտադրում էր Խորհրդային Ռուսաստանին, որպեսզի վերջինս պարտավորություն ստանձնի՝ այդ պայմանագիրը նույնությամբ ստորագրել տալու նաեւ Անդրկովկասյան մյուս հանրապետություններին:

Մոսկվայի պայմանագիրը մեր թիկունքում գործարք էր հակահայկական բնույթի՝ սուր սլաքով ուղղված էր հայ ժողովրդի շահերի դեմ, որի հետեւանքով Հայաստանը կորցրեց նույնիսկ Արեւելյան Հայաստանի տարածքները՝ Կարսի մարզը եւ Սուրմալուի

գավառը՝ Արարատ լեռնազազաթով ու Արարատյան դաշտի Արաբսի աջակողմյան հատվածով, որ երբեւէ չէր եղել Թուրքիայի տարածքում, այլ ժամանակին Պարսկաստանի տարածքում էր, հետո անցավ Ռուսաստանին՝ Թուրքմենչայի պայմանագրով, իսկ Ռուսաստանն օգտագործելով Հայաստանի անօգնական վիճակը, այդ տարածքը նվիրաբերեց իր դաշնակից Թուրքիային:

– **Կիսորդե՞նք ներկայացնել Նախիջեանի կարգավիճակը Կարսի եւ Մոսկվայի պայմանագրերի լույսի ներքո:**

– Կար այն թյուր կարծիքը, թե Կարսի պայմանագրով Նախիջեանի հարցում կրկնվեց Մոսկվայի պայմանագրի երրորդ կետը, ըստ որի Թուրքիան իրաժարվում էր Նախիջեանից հոգուտ Ադրբեջանի, պայմանով, որ Ադրբեջանը պատկանելության իրավունքը երրորդ կողմին զիջելու, այսինքն՝ Հայաստանին զիջելու իրավունք չունի: Միակ թերեւս փոփոխությունը, որ տեղի ունեցավ Կարսի պայմանագրով՝ Մոսկվայի պայմանագրի համեմատությամբ, այս կետն էր, այսինքն՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի երաշխավորի կարգավիճակը՝ Նախիջեանն Ադրբեջանին պատկանելու վերաբերյալ, պայմանագրում արդեն հանվեց Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Յակով Գալեցկու եւ հայկական պատվիրակության ներկայացուցիչներ Ասքանյանի եւ Մուսկալիսի ու Պողոս Մակինցյանի շանքերով, այսինքն՝ այդ կետը դուրս եկավ, եւ հիմա թյուրիմացություն է, թե իբր վաղը կամ մյուս օրը Նախիջեանի նկատմամբ Հայաստանն ինչ-որ տարածքային օրինական պահանջ ներկայացնելու դեպքում՝ որպես հայկական տարածք, Թուրքիան եւ Ռուսաստանը հանդիսանում են դրա երաշխավորը հոգուտ Ադրբեջանի: Նման բան Կարսի պայմանագրում չկա, եւ Մոսկվայի պայմանագրի այդ տիմար կետը կորցրեց իր ուժը Կարսի պայմանագրի ստորագրումով:

– **Ի՞նչ եք կարծում, պետական մակարդակով արժե՞ր նշել Սեւրի հաշտության պայմանագրի 100-ամյակը (գիտաժողովներ, բաղաձայնական բանավեճեր, պայմանագիրը ստորագրած երկրների հետ համատեղ հայտարարություններ), որպեսզի պարզաբանվեր, հանրայնացվեր եւ իրավաբանական տեսանկյունից ճշտումներ կատարվեր:**

– Պատկերացրեք, գործընթացն արդեն սկսել ենք, Պատմության ինստիտուտի աշխատակիցները մի քանի հեռավար գիտաժողովներ են կազմակերպել տարբեր երկրների հետ (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Ֆրանսիա, Լիբանան եւ այլն), եւ առաջիկայում մի քանիսը եւս պիտի անցկացնեն: Ցավոք սրտի, համավարակի պատճառով մենք չկարողացանք Սեւրում միջոցառում կազմակերպել: «Արեւմտահայերի համագումար» կազմակերպությունը գոնե կարողացավ Սեւրի պայմանագրի ստորագրման սրահում անցկացնել միջոցառում՝ նվիրված դաշնագրի 100-րդ տարեդարձին: Այժմ, քանի կա պետական մոտեցում, կարծում եմ՝ նոր դարաշրջան է բացվում Սեւրի դաշնագրի ուսումնասիրության տեսանկյունից, ու շատ ուրախալի է, որ հանրապետության վարչապետը նշում է, թե հայ պատմաբանների համար սա ուսումնասիրության կարեւոր թեմա է, եւ մենք լիարժեքորեն պիտի զբաղվենք այդ խնդրով ու երբեք մոռացության չտանք միջազգային իրավունքի գործադրման հրաշալի հնարավորությունը հայերիս համար, ապագա Հայաստանի կերտման համար:

– **Եւ հարցերի հարցը՝ ի՞նչ անել:**

– Հարցին կարճ կպատասխանեմ՝ պետականորեն պատրաստ լինել Սեւրի դաշնագրի կենսագործմանը, որովհետեւ Թուրքիան աշխարհաբաղաբանական առումով այսօր գտնվում է բավականին ծանր վիճակում: Գրեթե բոլոր հարեանների հետ ունի լրջագույն խնդիրներ, նաեւ իր դաշնակից ԱՄՆ-ի երկրների հետ, քիչ թե շատ իրեն մերձեցած Ռուսաստանի հետ եւս խնդիրներ ունի: Երկրի ներսում խլրոմմներ կան. քրդական հզոր շարժում գոյություն ունի, ամեն վայրկյան Թուրքիայում կարող են քաղաքական իրադարձությունները կտրուկ շրջադարձ ապրել, եւ Սեւրի դաշնագիրը կարող է օրակարգի մեջ մտնել: Սենք որպես ժողովուրդ եւ պետություն՝ պետք է պատրաստ լինենք այդ բաղձալի օրվա:

ԶՐՈՒՅՅԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Ադրբեջանում հայտնված Նարեկ Սարգսյանի ընտանիքը գանգատ է ներկայացրել Եվրոպական դատարան



Արա Ղազարյան, ՄԻԵԴ-ում Սարգսյանի ընտանիքի ներկայացուցիչ

Այոնիքի մարզի Նեբեին խնամարարական կենտրոնում հայտնված Նարեկ Սարգսյանի հարազատները գանգատ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ բարձրացնելով նրա կյանքի, խոշտանգումներից զերծ մնալու և այլ իրավունքների վերաբերյալ հարցեր: Այս մասին ասաց ՄԻԵԴ-ում Սարգսյանի ընտանիքի ներկայացուցիչ, փաստաբան Արա Ղազարյանը:

30-ամյա Սարգսյանը, հիշեցնենք, որպես անհետ կորած որոնվում էր 2020 թ. հուլիսի 8-ից: Գորայք համայնքի Սպանդարյան ջրամբարի մոտակայքում գտնվող արտավայրում նա ձիով գնացել էր անասունների հոտի ուղղությամբ և չէր վերադարձել: Որոնողական աշխատանքներն արդյունք չէին տվել, և 1 շաբաթ անց ադրբեջանական լրատվամիջոցները տեսալուսանկարներ հրատարակեցին, որում Սարգսյանը դժգոհում էր հայաստանում իր նկատմամբ վերաբերմունքից և իբր բազմաթիվ անապատային հայցում Ադրբեջանից կամ խնդրում իրեն փոխանցել երրորդ երկիր:

Նարեկ Սարգսյանի հարազատները հուլիսի 19-ին հրատարակեցին կիրառելի դիմում էին հասցեագրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որը հուլիսի 22-ին բավարարել էր այն՝ Ադրբեջանին պարտավորեցնելով մինչև սեպտեմբերի 2-ը

տրամադրել տեղեկություններ Սարգսյանի գտնվելու վայրի, պայմանների, առողջական վիճակի և մի շարք այլ հարցերի մասին:

ՄԻԵԴ-ում Սարգսյանի ընտանիքի ներկայացուցիչ Արա Ղազարյանի հետ մեր զրույցը՝ ստորև:

– **Պարոն Ղազարյան, ի՞նչ հարցեր էք բարձրացրել Ձեր գանգատում:**

– Բարձրացրել ենք կյանքի իրավունքի հարցը, բանի որ Նարեկի կյանքը պոտենցիալ վտանգի տակ է, խոշտանգման հարցը, որովհետև նաև խոշտանգման վտանգի տակ է, նաև՝ անձնական կյանքի հարգման հարցը, որովհետև տեսանյութում, որ անընդհատ պատվում է, և իշխանությունները միջոցներ չեն ձեռնարկում, նա խոցելի վիճակում էր, և ամենակարևորը, որ վերջերս հայտնաբերեցինք, այն է, որ խոսակցության մեջ Նարեկն ասում է, որ Ադրբեջանից ապաստան է հայցել՝ սպիտակ դրոշմ ձեռքին մոտենալով նրանց դիրքերին: Իրավաբանորեն այդ փաստն ինքնին նշանակում է հայցել ապաստան, այսինքն՝ եթե անձը սահմանը անցնելիս ասում է՝ օգնե՛ք, ես փախել եմ այս երկրից, որ հանգրվանեմ ձեզ մոտ, դե ֆակտո ապաստանի հայց է, բայց դա նշանակում է, որ նրա նկատմամբ այժմ պետք է վարչական վարույթ հարուցված լինի, այլ ոչ թե բռնական գործ, եթե իհարկե նա հայցել է ապաստան:

– **Բայց որքանով կարող է հավաստի լինել այդ տեղեկությունը:**

– Յե՛նց դրա վերաբերյալ էլ մենք տե-

ղեկություն ենք խնդրել, որովհետև մեր պետական մարմինները պնդում են, որ նրան առեանագել են, իսկ եթե առեանագել են, նշանակում է չճանաչված ազատագրվում է, այսինքն՝ նրան ազատությունից զրկել են, բայց պետությունը դա չի ճանաչում: Հիմա մի հարց էլ է ծագում. եթե իսկապես նա հայցել է ապաստան, և Ադրբեջանը հանձն է առել այդ գործընթացը, ապա արդյո՞ք Ադրբեջանն ի վիճակի է նրա անվտանգությունն ապահովել այն դեպքում, երբ միջազգային ատյանները հաստատված են համարել, որ այնտեղ համատարած հայատյացություն է, և որ անազատության մեջ գտնվողների նկատմամբ բռնություն են կիրառում: Այսինքն՝ Ադրբեջանն այսպես թե այնպես պետք է ստիպված լինի Նարեկին երրորդ երկիր ուղարկել, որովհետև օբյեկտիվորեն չի կարող ապահովել նրա անվտանգությունը: Այս ամբողջը ցույց է տալիս, որ այդ տեսանյութը լեգենդ է, հնարովի պատմություն, որովհետև Նարեկը զբաղված էր իր խաղաղ աշխատանքով, և պարզապես նրա բախտը չբերեց, բանի որ ֆերման սահմանի մոտ էր: Եվ ուշադրություն դարձրե՛ք՝ առաջին անգամ է, որ մեր իրավապահ մարմինները բռնական գործ են հարուցել առեանագման հոդվածով. դա նշանակում է, որ նրան առեանագել են մեր տարածքից, իսկ իրավաբանորեն դա արդեն մարտահրավեր է, նոր կոնտեքստ:

– **Նարեկի հարազատները ԱԱԾ-ում հարուցված գործով իրավահաջորդ ճանաչվել են, նախաքննության ընթացքից տեղեկացված է:**

– Այո, մենք նրանց ներկայացուցիչներն ենք, և փաստաթղթերի այն ծավալը, որ հնարավոր էր տրամադրել իրավահաջորդների ներկայացուցիչներին, ունենք և ուղարկել ենք Եվրոպական դատարան:

– **ՄԻԵԴ-ի միջանկյալ միջոց կիրառելու որոշումից մեկ ամիս է անցել, այս ընթացքում Ադրբեջանը որե՛ն բայլ ձեռնարկել է, որե՛ն տեղեկություն տրամադրել է ձեզ:**

– Դեռ ոչ, բայց ես Ադրբեջանն է պարտավոր կապի միջոց տրամադրել, և Հայաստանն է պարտավոր կապի միջոց հայցել Ադրբեջանից: Իհարկե, Ադրբեջանը բազմիցս հայտարարել է, որ չի համագործակցում Հայաստանի հետ, բանի որ դիվանագիտական հարաբերություններ չունի, բայց ինչնեք Սարիբեյլյանի գործը, որով Եվրոպական դատարանը սահմանել է, որ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը հիմք չէ, որ մարդու իրավունքների հարցերով պետությունները չհամագործակցեն: Ես ասեմ՝ երրորդ կողմի միջոցով լույսիկս Հայաստանն ու Թուրքիան են համագործակցում, օրինակ՝ Վրաստանում Թուրքիայի դեսպանատան միջոցով համագործակցում են արտահանման գործերով կամ խիստ կարեւորություն ներկայացնող փախստականների գործերով, այսինքն՝ միջանկյալ համագործակցությունն ընդունված է տարբեր պետությունների միջև:

– **Իրատեսակա՞ն է, որ մինչ վերջնա-**

ժամկետի ավարտն Ադրբեջանն այդպես էլ որե՛ն բայլ չի ձեռնարկի:

– Չէ, դա բացառվում է, այնպես չէ, որ իրենք կանտեսեն Եվրոպական դատարանի՝ հրատապ միջոց կիրառելու որոշումը, որովհետև դա կնշանակի Կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում, և հարցն անմիջապես կմտնի Նախարարների կոմիտե, որը բաղաբաղական բանաձեռն պետք է ընդունի սովյալ պետության դեմ:

– **Իսկ այդ տեղեկությունները որքանով են արժանահավատ լինելու մեզ համար:**

– Դա արդեն այլ հարց է, տեղեկություններ այսպես թե այնպես կտրամադրի, բայց որքանով է հավաստի և ամենակարևորը՝ որքանով է ամբողջական՝ հետագա բնութային հարց է: Այսօր ամենահրատապ անհրաժեշտությունը կապի միջոց ապահովելն է, որպեսզի ընտանիքի անդամները կարողանան առանց միջնորդի, նկատի ունենա՞նք Կարմիր Խաչի, շփվել Նարեկի հետ:

– **Կարմիր Խաչն օրերս հայտնեց, որ տեսակցել է Նարեկին: Ի՞նչ վիճակում էր նա, ի՞նչ հայտնի դարձավ այդ այցի արդյունքում:**

– Դե, Կարմիր Խաչի տեսակցություններից, որպես կանոն, ստացվում է այն տեղեկությունը, որ նորմալ է ամեն ինչ, իրեն լավ է զգում և այլն, և այլն: Շատ կցկտուր ծավալի տեղեկություն է, բայց ես չեմ մեղադրում Կարմիր Խաչին, բանի որ նրանց մանդատը շատ սահմանափակ է, հունակատար բնույթի է, իրավական գործընթացներին նրանք չեն խառնվում, շփվում են միայն հարազատների հետ: Մեր ունեցած տեղեկությունն այն է, որ նա լավ է, բայց նա անազատության մեջ է, իսկ եթե անազատության մեջ է, չի կարող ապաստան հայցող հանդիսանալ, այսինքն՝ հակասություն կա փաստերի և Ադրբեջանի հայտարարությունների միջև:

– **Պարոն Ղազարյան, միջանկյալ միջոց կիրառելիս ՄԻԵԴ-ը նշել էր, որ գանգատն առաջնահերթ է բնույթով:**

– Այո, առաջնահերթությունն տրված է, ինչպես Կարեն Ղազարյանի գործին, բայց Ղազարյանի գործով այդ առաջնահերթությունը սկսեց աշխատել երկրորդ տարում, երկու տարի անց միայն սկսվեց կոմունիկացիան, մինչ այդ մենք միայն փաստեր էինք հավաքում և ուղարկում: Յուսով ենք, որ Նարեկի դեպքում ավելի արագ կգաղղի Եվրոպական դատարանը:

– **Վերջին դեպքն էլ օրերս Գուրգեն Ալավերդյանի հետ տեղի ունեցավ:**

– Այդ դեպքում կոնտեքստը մի փոքր այլ է այնքանով, որ զինծառայողի մասին է խոսքը, բայց իրավունքի բնույթը նույնն է. դու չես կարող խոցելի վիճակում գտնվող անձին տեսանկարահանել և դա տարածել՝ նպատակ ունենալով զինված հակամարտության մյուս կողմին ցույց տալ, թե ինչպես են նվաստացնում նրա բաղաբաղուն: Դա ժնեկի կոնվենցիայի, ինչպես նաև մարդու իրավունքների խախտում է:

Պարետատունը հաստատեց կրթության կազմակերպման նոր կարգը. ինչ է սպասվում սեպտեմբերի 15-ից

Սկիզբը՝ էջ 1
համար՝ դասարանը բաժանում են 10-հոգանոց խմբերի
■ դասագրքերի բաշխումը իրականացնում են օգոստոսի 20-ից սեպտեմբերի 10-ը՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Դասացուցակ
■ Դպրոցներում սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ, ըստ անհրաժեշտության կարող է սահմանվել երկհերթ ռեժիմ:
Մինչև 20 սովորող ունեցող դասարանները դպրոց են հաճախում շաբաթվա վեց օրը՝ ըստ դասացուցակի:
Երկու խմբի բաժանված դասարանի խմբերից յուրաքանչյուրը դպրոց է հաճախում շաբաթական երեք օր:
Խմբերի դասացուցակը կազմվում է իրար հաջորդող դասերի և ինքնուրույն աշխա-

տանքի օրերի համար:
Ինքնուրույն աշխատանքի օրերին սովորողներն ուսուցչի հանձնարարած աշխատանքը կատարում են տանը:
Ուշադրություն. դպրոցներում բուժետեսրի և ճաշարանների աշխատանքն արգելվում է:

Ռիսկային խմբի սովորողը
Այն սովորողները, ովքեր ունեն 33 առողջապահության նախարարության կողմից սահմանված կորոնավիրուսի ռիսկային խմբի հիվանդություններից որե՛ն մեկը, չեն հաճախում դպրոց: Նրանց ուսուցումը կազմակերպվում է հեռավար կամ տնային ուսուցման եղանակով:
Այդ հիվանդություններն են.
■ արյան բարձր ճնշում,
■ շաքարային դիաբետոս,
■ սրտի հիվանդություն,

- սրտի կամ գլխուղեղի կաթված (ինսուլտ),
- քրոնիկ շնչառական հիվանդություն,
- բաղկեր:

Դպրոց գալուց առաջ
Դպրոց գալուց առաջ ծնողները կամ օրինական ներկայացուցիչները կատարում են երեխայի ջերմաչափում: 37 և բարձր ջերմություն ունենալու դեպքում դիմում են բնակավայրի բուժհաստատություն և տեղեկացնում դպրոցին՝ երեխայի դպրոց չհաճախելու մասին:
Եթե տանն առկա է կորոնավիրուսային հիվանդության ախտանիշներով կասկածելի կամ հաստատված հիվանդ, ապա բացառվում է երեխայի հաճախումը դպրոց:
Սովորողի մուտքը դպրոց առանց դիմակի արգելվում է: Դիմակ չունեցող սովորողներին դպրոցը մուտքի մոտ կտրամադրի մեկանգամյա օգտագործման դիմակ:
Ծնողներն իրականացնում են ծնող-ուսուցիչ համակարգված հաղորդակցություն և աշակցում, որ ունենանք «Առողջ և ապահով դպրոց»:

Դպրոցների ախտահանումը
Մինչև դասերի սկիզբը՝ նախորդ օրը երեկոյան կամ դասերը սկսելուց առաջ բոլոր

դռների և պատուհանների բռնակները, սեղանները, աթոռները, գրատախտակները, սանհանգուցյան փոխառանվում են:
Եթե դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվում է հերթափոխով, ապա հերթափոխների միջև սահմանված ընդմիջումը պետք է բավարարի ախտահանումն իրականացնելու համար: Կատարվում է պատշաճ օդափոխություն օրը առնվազն 3 անգամ, 8-10 րոպե տեղողությամբ: Ապահովվում է ձեռքերի լվացման հնարավորություն՝ հոսող տաք և սառը ջրով, արմուկային կամ ոտնակային կառավարման ծորակներով, օձառով, անհնարիության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ:
Դպրոցի մուտքի մոտ, միջանցքներում, դասասենյակներում, ուսուցչական և այլ սենյակներում ապահովվում են ալկոհոլային հիմքով ախտահանիչներ:
Տեղադրվում են հատուկ մակնշմամբ փակ արբանաններ՝ օգտագործված դիմակները և անհատական պաշտպանության այլ պարագաները նետելու համար:
Սովորողի մուտքը դպրոց
Սովորողները դպրոց են գալիս ըստ ուսումնական հաստատության

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարը՝ Սյունիքում

Օգոստոսի 31-ին աշխատանքային այցով Սյունիք է ժամանել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Յակոբ Արշակյանը՝ նախարարի տեղակալ Վիկտորիա Պողոսյանի հետ:

Սյունիքի մարզպետարանում նա հանդիպում է ունեցել մարզպետ Հունան Պողոսյանի ու փոխմարզպետ Նարեկ Բաբայանի հետ:

Հանդիպման ընթացքում նախարարը հետաքրքրվեց Սյունիքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում ընդգրկված կազմակերպությունների քանակով ու գործունեությամբ, մարզի աշխատաշուկայի կառուցվածքով, ՏՏ բնագավառի զարգացման հեռանկարներով և պահանջներով:

Յակոբ Արշակյանը տեղեկացրեց, որ առաջիկայում Սյունիքում նախատեսվում է տեխնոպարկի հիմնում, եւ քննարկվեցին նաեւ դրա համար առավել նպատակահարմար վայրի ու կրթական բազայի հետ կապված հարցեր:

Այնուհետեւ հյուրերն այցելեցին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ:

Յակոբ Արշակյանը նախ շրջեց բուհի տարածքում ծանոթանալով տեխնիկական ու կրթական հնարավորություններին, հիմնված լաբորատորիաներին: «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում նա նաեւ ծանոթացավ դպրոցահասակ ծրագրավորողների հետ, որոնք, ի դեպ, նախարարին պատմեցին արձակուրդների ընթացքում իրենց աշխատանքով զուտ վաստակելու առաջին փորձի մասին:

ՀԱԳՀ-ի Կապանի մասնաճյուղում նախարարի հետ հանդիպման էին ելել նաեւ ուսանողներ ու հատկապես առաջին կուրսեցիներ:

Սեպտեմբերի 1-ի նախօրեին ողջունելով Նրանց Նոր ուսումնական տարվա մեկնարկի առիթով՝ Հ. Արշակյանը ներկայացրեց իր ղեկավարած նախարարության աշխատանքի հիմնական գերակա ուղղությունները՝ դրանցից յուրաքանչյուրի՝ Հայաստանում ունեցած դերի ու զարգացման հեռանկարների վրա հրավիրելով ապագա մասնագետների ուշադրությունը:

Ուսանողները նաեւ տեղեկացան բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող այն բազմաբնույթ կրթական ծրագրերի մասին, որոնք նախաձեռնել ու իրականացնում է նախարարությունը:

Հյուրերը պատասխանեցին ուսանողներին ու դասախոսներին հետաքրքրող հարցերին, իսկ Յակոբ Արշակյանը Սյունիք աշխատանքային այցի շրջանակներում այցելեց նաեւ Գորիս:



Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում



«Գորիսի Գամմա» ԲԲ ընկերությունում

տանքային այցի շրջանակներում այցելեց նաեւ Գորիս:

Գորիս քաղաքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Յակոբ Արշակյանն այցելել է ռազմարդյունաբերության դեպարտմենտի արտադրությամբ զբաղվող «Գորիսի Գամմա» ԲԲ ընկերություն:

Գործարանի ինժեներները ներկայացրել են էլեկտրոնային անկյունաքարի արտադրման ողջ փակ ցիկլը, որի նախագծումից արտադրությունն իրականացվում է տեղում և արտահանվում Ռուսաստանի Դաշնություն՝ կիրառվում ՄուՄ և ՇՄ ինքնաթիռների արտադրության մեջ, եւ Կանադա:

ՀՀ ԲՏԱ նախարարության եւ ՊՆ ՇՈՒ հետ համագործակցության շրջանակներում ընկերությունում մշակվում են ռազմարդյունաբերական մի շարք նախագծեր, որոնք ներկայացվել են նախարարի ուշադրությանը:

Շրջայցի ընթացքում նախարարը գրուցել է ինժեներների հետ, ծանոթացել արտադրատեսակներին, գործարանի տարածքին, շենքային պայմաններին:

«Գորիսի Գամմա» ԲԲ ընկերությունը շուրջ 10-ը տարի զբաղվում է ռազմարդյունաբերական նախագծերի իրականացմամբ:

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քննարկվել են Հյուսիս-հարավի Զաջարան-Ագարակ ճանապարհա-հատվածի կառուցման հետ կապված հարցեր

Օգոստոսի 25-28-ը կայացել է Կայուն-նացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հեռավար առաքելությունը, որի ընթացքում քննարկվել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանս-4-ի Զաջարան-Ագարակ ճանապարհա-հատվածի կառուցման հետ կապված հարցեր:

Այս մասին հայտնում են ՏԿԵ նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ նշելով, որ այդ հատվածի կառուցումը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներով: Ծանապարհա-հատվածի նախագծումն իրականացնում է «Այ Առ Դի Ինջեներինգ եւ Ջի Փի Ինջեներինգ» ՀԳ իտալական ընկերությունը:

Առաքելության ընթացքում Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի տրանսպորտի եւ հաղորդակցման գծով ղեկավար Ա. Գլավատսկիի, ծրագրերի իրականացման գլխավոր մենեջեր Ա. Ռաչիկովի, հիմնադրամի ծրագրերի լիազոր ներկայացուցիչ Ա. Պողոսյանի եւ այլ մասնագետների հետ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեյանն ու «Ծանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներն անդրադարձել են Տրանս-4 ծրագրի Զաջարակ-Ագարակ հատվածի կառուցման հետ կապված հիմնական հարցերին և ժամկետներին:

Արձանագրվել է, որ նախագծային աշխատանքներն ընթացքում են. կատարվում են գեոդեզիական հետազոտություններ, երկրաբանական ուսումնասիրություններ եւ այլն: Պատվիրատուին նախնական նախագիծը կհանձնվի նոյեմբերին: Ծանապարհա-հատվածի նախնական նախագիծը հետ կներկայացվի նաեւ հողերի օտարման եւ տարաբնակեցման պլանի նախագիծը, որը կվերջնականացվի վերջնական նախագծի արդյունքների հիման վրա:

Նախարարի տեղակալ Ղալեյանը շեշտել է ծրագիրն արդյունավետ իրականացնելու կարևորությունը:

Նախնական ժամանակացույցի, սովորողին կարող է ուղեկցել ոչ ավել, քան մեկ հոգի: Ուղեկցողի մուտքը դպրոց արգելվում է:

Սովորողի մուտքը դպրոց առանց դիմակի արգելվում է: Դիմակ չունեցող սովորողներին դպրոցը մուտքի մոտ կտրամադրի մեկանգամյա օգտագործման դիմակ:

Դպրոցի բակում, բոլոր մուտքերի մոտ իրականացվում է գծանշում:

Սովորողները դպրոց մուտք կգործեն բոլոր մուտքերից: Եթե դպրոցն ունի մեկ մուտք, պետք է սահմանել դպրոց գալու գրաֆիկ ըստ դասարանների:

Դպրոց մտնելիս սովորողները պետք է պահպանեն սոցիալական հեռավորություն, խուսափեն դպրոցի բակում կամ մուտքի մոտ կուտակումներ առաջացնելուց:

Դպրոց մտնելիս կազմակերպվում է սովորողների ջերմաչափում եւ ձեռքերի փխտահանում:

Դպրոցը վարում է աշակերտների ջերմաչափման մատյան: Մատյանում գրանցվում են միայն 37 եւ ավելի ջերմաստիճան ունեցող սովորողների տվյալները:

Յուրաքանչյուր մուտքի մոտ առանձնացված է սենյակ կամ տարածք հիվանդ երեխաների մեկուսացումն ապահովելու

համար՝ մինչեւ ծնողի կամ բժշկի գալը: Այդ տարածքներն արգելվում է օգտագործել այլ նպատակների եւ տարանցիկ տեղաշարժի համար:

Դասարանում

Դասասենյակում սովորողները կրում են դիմակներ:

Սովորողները դասին մասնակցում են տեղից: Գրատախտակին մոտ կանչելն արգելվում է:

Սովորողներին ստուգված գրավոր աշխատանքները տրամադրելն արգելվում է, կարող է տրամադրվել գրավոր աշխատանքի լուսապատճենը:

Ֆիզկուլտուրայի դասերը կազմակերպվում են դասասենյակում ըստ ուսուցիչներին տրամադրված մեթոդական ցուցումների կամ բացօթյա տարածքներում եւ սպորտային մարզադահլիճում՝ շեշտը դնելով անհատական վարժությունների վրա:

Սովորողների գնահատումը

Գրավոր աշխատանքները կազմակերպվում են թերթիկների վրա: Տեսրեր օգտագործելը թեմատիկ գրավոր աշխատանքների համար արգելվում է:

Կիսամյակի ընթացքում կազմակերպվում

է երկու թեմատիկ գրավոր աշխատանք:

Կիսամյակի վերջում կատարվում է աշակերտների գիտելիքների ստուգում՝ ամփոփիչ գրավոր աշխատանքի միջոցով:

Սովորողների գնահատումը կատարվում է էլեկտրոնային մատյանում:

Գնահատականները սովորողները եւ ծնողները կարող են տեսնել էլեկտրոնային օրագրում:

Արգելվում է դպրոցում կազմակերպել զանգվածային միջոցառումներ, երկարօրյա ծառայություններ, արտաուսումնական խմբակներ:

Ուշադրություն

Ծնողական ժողովները կազմակերպվում են հեռավար, անհնարիության դեպքում՝ բացօթյա, դահլիճում կամ միջանցքում՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ:

Ռիսկի խմբի ուսուցիչները

65 եւ բարձր տարիքային խմբի ուսուցիչները (անկախ առողջական վիճակից) կարող են աշխատանքի ներկայանալ հատուկ պաշտպանիչ միջոցների կիրառությամբ, որոնք տրամադրում է պետությունը: Նրանք (անկախ առողջական վիճակից) կարող են

չներկայանալ աշխատանքի: Այդ դեպքում Նրանց համար դասաբաշխում չի կատարվում, աշխատավարձը պահպանվում է նախորդ ուսումնական տարվա դասաբաշխմանը համապատասխան, բայց ոչ ավել, քան մեկ հաստիքի չափով: Ռիսկային խմբի ուսուցիչներն աշխատանքի չներկայանալու դեպքում դասերը կարող են վարել հեռավար եղանակով:

Եթե աշխատակազմի որեւէ անդամի մոտ նկատվում է գրիպի կամ սուր շնչառական վարակների ախտանշաններ, ապա բացառվում է վերջինիս աշխատանքի ներկայանալը:

Հեռախոսահամարներ

Պարզաբանումների համար կարելի է դիմել ԿԳՄՍ նախարարության Թեժ գիծ ծառայությանը՝ (010) 599 600, հանրակրթության վարչությանը՝ (010) 599 618, (010) 599 619 հեռախոսահամարներով:

Դպրոցի աշխատակիցների մոտ հիվանդության ախտանշանների կասկածի դեպքում զանգահարել առողջապահության նախարարության թեժ գիծ՝ 8003 համարով: Բողոքների դեպքում զանգահարել պարետատան թեժ գիծ՝ 8141 համարով:

150 տարի առաջ՝ 1870-ին, վաղնջական Գորիս գյուղի դիմաց՝ գետի աջափնյա հարթավայրում, հիմնադրվեց Գորիս քաղաքը, որը 1868-ին գավառամասի կենտրոնից դարձավ Չանգեզուրի գավառակենտրոն: Տասը տարի առաջ «Սյունյաց երկիրը» հատուկ համար նվիրեց Գորիս քաղաքին (N10 (229), 2011 թ.): Անպայման թերթեք այդ համարը եւ Գորիսի պատմությանն ու ներկային առնչվող շատ-շատ հարցերի պատասխան կգտնեք: Շնորհավորում ենք բոլոր գործընկերներին՝ արժանահիշատակ հոբելյանի կապակցությամբ: «ՍՅՈՒՆԱՑ ԵՐԿԻՐ»



... ՉԱՐԻ ՍԵՐՄԸ ԲՈՒՅՆ ՉԻ ԴՆԻ, ԱՆԱՐՄԱՏ Է. 150 տարի առաջ քաղաք հռչակված Գորիսը հենց այս բանաձեւով է առաջնորդվել տարիներ շարունակ. այդպես է լինելու հետայսու եւս

ՀՀ Սյունիքի մարզպետարանը հայտարարում է բաց մրցույթ «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները պահանջվող ներքինիչալ փաստաթղթերը ներկայացնում են Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին:

- ա) դիմում
- բ) մեկ լուսանկար 3x4 չափսի,
- գ) բաղվածք՝ աշխատանքային գրքուկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի քաղաքացիները նաեւ գին.գրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակառնային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/,
- զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ /լրացված/,
- է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- ը) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ / դրանց ամկայության դեպքում/,
- թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից /թե՛ կազմակերպությունը չի լուծարվել/,
- ժ) տեղեկանք այն մասին, որ ինքը չի տառապում այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ պաշտոնում նշանակվելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը:

Մրցույթը կանցկացվի 2020 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 11 00-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանի շենքում /բ. Կապան, Լժդեհի 1/:

Տնօրենի ընտրության 1/ պարտադիր պայմաններն են՝
 ա. համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն.
 բ. ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
 գ. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ այլ իրավական ակտեր/.
 դ. կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն.
2/ լրացուցիչ պայմաններն են՝
 ա. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
 բ. համակարգող էլեկտրոնային ծախսերի կառավարման միջոցներով աշխատելու ունակություն.
 գ. տրամաբանելու եւ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
 դ. աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման անհրաժեշտ հմտություն.
 ե. ենթակառուցվածքի հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
 զ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.
 Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00 - 16:00 /ընդմիջում՝ ժամը 13:00-14:00/, բացի շաբաթ, կիրակի եւ տոնական օրերից, բ. Կապան, Լժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ. (0285) 4-42-75:
 Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի հոկտեմբերի 5-ը: Մրցույթին մասնակցելուց հետո քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ՊՏԱԾ-3 ծրագրի «Ֆինանսական Մասնակցային Մոտեցում» (ՖՄՄ 3) բաղադրիչի 3-րդ փուլի իրականացմանն աջակցություն

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-3) ծրագրի իրականացման գրասենյակը Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անունից հրավիրում է Սյունիքի մարզի Կապանի կամ Քաջարանի կամ Մեղրիի տարածաշրջաններում գրանցված բոլոր համապատասխան հասարակական կազմակերպությունների՝ մասնակցելու Ֆինանսական Մասնակցային Մոտեցման 3-րդ փուլի (ՖՄՄ 3) իրականացմանն աջակցող հասարակական կազմակերպության ծառայությունների մատուցման համար մրցույթային փաթեթի ներկայացման նպատակով հայտարարվող ազգային մրցույթին:

մակարդային եւ այլ տեխնիկա, անհրաժեշտ կապի ու տրանսպորտային միջոցներ, ինչի ամկայության մասին հավաստիանալու նպատակով ՊՏԱԾ-3 ծրագրի գնահատող հանձնաժողովն իրավունք ունի կատարելու այցելություն հայտատուի հայտում նշված գործունեության հասցե:

- Մասնակցային մոտեցման/մեթոդի կիրառման փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- Մրցույթային գործընթացների եւ մրցանակաբաշխության կազմակերպման փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- ՀԿ-ի աշխատանքային փորձը Սյունիքի մարզում կդիտարկվի որպես առավելություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար գրել ՊՏԱԾ-3 ծրագրի գնումների մասնագետ/հաշվապահ Մարինա Բաբայանին՝ հետեւյալ էլ-փոստի հասցեով. m.babayan@consecord.am.

Ծրագիր՝	«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-3)
Հղում No՝	BMZ-N 2009.6657.2
Ֆինանսավորում՝	KfW բանկ, Գերմանիա
Պատվիրատու՝	ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (Ծրագրի իրականացման գործադիր մարմին) ՊՏԱԾ-3 ծրագրի իրականացման գրասենյակի աջակցությամբ
Պայմանագիր՝	Ծառայությունների մատուցման
Հայտի ներկայացման Ընթացակարգ՝	KfW գնումների ընթացակարգ, ազգային (սահմանափակ) մրցույթ
Մրցույթի Ծածկագիր՝	SPPA /ARMENIA/S/2020-3
Ծառայությունների շրջանակը՝	Ֆինանսական Մասնակցային Մոտեցման 3-րդ փուլի (ՖՄՄ 3) իրականացմանն աջակցող հասարակական կազմակերպության ծառայություններ
Հայտարարության սկիզբ	Օգոստոսի 28, 2020
Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ	Սեպտեմբերի 30, 2020, 18:00
Հայտերը ներկայացնելու հասցե	ՀՀ, Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, սեյլակ N 544, ՊՏԱԾ-3 ծրագրի իրականացման գրասենյակ
Հայտի փաթեթի լեզու	ԱՆԿԵՆԵՆ

Հայտատուին ներկայացվող պահանջները՝
 Հայտատուն պետք է լինի Սյունիքի մարզի Կապանի կամ Քաջարանի կամ Մեղրիի տարածաշրջաններում գրանցված հասարակական կազմակերպություն եւ համապատասխանի որակավորման հետեւյալ պահանջներին, որպեսզի իրավունք ստանա մասնակցելու հետագա տեխնիկական եւ ֆինանսական գնահատմանը.

- ՀԿ-ն պետք է ունենա նվազագույնը 5 տարվա փորձ՝ սոցիալ-տնտեսական կամ բնապահպանական կամ համայնքային զարգացման ծրագրերում,
- ՀԿ-ն պետք է ունենա սույն առաջադրանքի նմանությամբ առնվազն 2 ծրագրերի իրականացման փորձառություն առնվազն վերջին 5 տարվա ընթացքում,
- ՀԿ-ն պետք է ունենա առնվազն 2 տարբեր միջազգային կազմակերպությունների կամ գոյություն ունեցող ծրագրերի իրականացման փորձառություն վերջին 5 տարվա ընթացքում,
- ՀԿ-ն պետք է ունենա սույն առաջադրանքով պահանջված փորձառու անձնակազմ, գրասենյակային տարածք, հա-

Ազգային մրցույթի փաստաթղթերի փաթեթի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ծանոթանալ Հրչակյան միջավայրի նախարարության կայքի՝ www.mnp.am «Հայտարարություններ» բաժնում, ինչպես նաեւ սույն կայքի ՊՏԱԾ-3 ծրագրի ենթաբաժնի հայտարարությունների բաժնում:

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-3) ծրագիրը մաս է կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական Համագործակցության եւ Զարգացման Նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկված Կովկասյան նախաձեռնության:

Սույն ծրագիրը իրականացվում է համաձայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված միջկառավարական ֆինանսական համաձայնագրերի, ինչպես նաեւ KfW բանկի եւ ՀՀ Բնապահպանության Նախարարության միջեւ 28.05.2013թ-ին ստորագրված Առանձին Համաձայնագրի հիման վրա:

Սյունյաց երկիր
 ՀԻՄՆԱԴՐՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐՎՈՒ «ՍՅՈՒՆԱՑ ԵՐԿԻՐ» ՍԱՅՄԱՆԱԾՈՒԿ ՊՏԱՏՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿԵՏԵՐԵՐԻ 1-ԻՑ:
 Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, բ. Կապան, Շահումյան 20/32:
 (+374 285) 5 25 63
 (+374 91) 45 90 47
 (+374 77) 45 90 47
 syuniacyerker@mail.ru
 www.syuniacyerker.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդագիր վիճակում:
 «ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
 Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Թե՛ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ բ. Երեւան, Արշակունյաց 2:
 Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 08.09.2020թ.: